



Ե Ր Կ Շ Ա Բ Ա Թ Ա Թ Ե Ր Թ

ՀՀ Դաշնակցության Արցախի Կենտրոնական Կոմիտեի պաշտոնաթերթ

Մենք համացանցում

www.aparaj.am

Խմբագրական

Ապահովենք հասարակության մասնակցությունը

Ժողովրդավարական կառավարման համակարգը կիրառած երկրները երբեմն կանգնում են հենց ժողովրդավարությունից բխած դժվարությունների առաջ: Հարցը նրանում է, որ ժողովուրդն ինքնին ինչ-քանով է պատրաստ կիրառել իրեն տրված լիազորությունները եւ, բնականաբար, պատասխանատվությունը կառավարման համակարգում մասնակից դառնալու եւ իր ճակատագիրը տնօրինելու համար: Ժողովրդավարական սկզբունքից ելնելով՝ այդ լիազորությունից օգտվելը ժողովրդի բացարձակ իրավունքն է:

Ժողովրդավարության համակարգի կիրառումը չպետք է միայն սահմանափակել ընտրություններին մասնակցությամբ եւ ձայն տալու արարողակարգով: Հատկապես Եվրոպական երկրներում առավել ուշադրության առարկա է մասնակցային ժողովրդավարության մոդելը, որտեղ ենթադրվում է գործիքակազմ ստեղծել, որպեսզի հասարակության զանազան շերտեր առավել դերակատարություն ապահովեն կառավարման համակարգում՝ այսպիսով լուծելով ժողովրդի թե՛ լիազորությունից օգտվելու եւ թե՛ պատասխանատվության ընդլայման խնդիրները: Բնական է, որ այս մասնակցության ապահովումը կնպաստի առավել հզոր պետության ունենալուն:


Մասնակցային ժողովրդավարություն ունենալու համար, ինչպես ասվեց, զանազան կառույցներ եւ համակարգեր կարելի է կիրառել, այդ թվում՝ կուսակցությունների եւ հասարակական կազմակերպությունների աշխատանքային ուղղվածությունից սկսած մինչեւ օրենսդրական միջամտություններ: Որպես օրինակ, փաստ է, որ խորհրդարանական համակարգով առաջնորդվող երկրներում ավելի են ընդլայնվում պատասխանատվության մակարդակները, եւ, բնականաբար, կառավարման համակարգում հասարակության մասնակցությունն ավելի շոշափելի է դառնում: Ինչեւէ, Արցախի Սահմանադրությունը մեզ թույլ չի տալիս երկրի կառավարման վերին օղակներում բարձրացնել պատասխանատվության եւ իրավասությունների, ինչպես նաեւ վերահսկողության լծակների համատարածությունը: Սակայն դրանով ամեն ինչ կորած չպետք է համարել:

Եվրոպական փորձը ցույց է տալիս, որ տեղական ինքնակառավարման համակարգը կարող է լուծել նշված խնդիրների զգալի մասը:

Արցախում հետաձգված են ավելի քան 80 համայնքների ընտրությունները: Հասկանալի է, որ նախ՝ հետաձգման պատճառը 2016 թվական ապրիլյան պատերազմն էր, եւ հետո՝ Սահմանադրության ընդունմամբ ՏԻՄ նոր օրենքի մշակման անհրաժեշտությունը: Երկրի համայնքների ավելի քան մեկ չորրորդի ընտրությունների հետաձգվելը անկախ պատճառից՝ վկայում է մի բանի մասին՝ ՏԻՄ համակարգի չկայացվածություն: Եվ դեռ հարց է՝ ընտրությունների կայանալու պարագային ինչպիսի ակտիվություն կարելի է ակնկալել թե՛ քաղաքական կուսակցությունների եւ թե՛ հասարակության մասնակցության հարցում:

Դաշնակցության համար, որպես սկզբունք, միշտ կարելուով է հասարակության եւ իշխանությունների անմիջական շփումն ու խնդիրների վերհանումը: Պահն է ահագանգ հնչեցնելու՝ ՏԻՄ համակարգի անգործության շարունակությունը հասարակություն-իշխանություն տարանջատման հիմնական պատճառներից է, եւ այդ տարանջատումն օր օրի ավելի է խորանում: Ի դեպ, այս երեւույթը ցայտուն է դառնում Դաշնակցության խմբակցության անդամների՝ համայնքներ կատարած այցելությունների ընթացքում:

ՏԻՄ համակարգի կայացումն ու այդ համակարգի լիազորություններով օժտելու գործընթացը վերջերս կարելուով է նաեւ Հայաստանի Հանրապետությունում եւ դարձել է ՀՀ կառավարության ուշադրության առաջնային թեմաներից մեկը: Պետք է օգտվել ՀՀ փորձից եւ օր առաջ կարգավորել Արցախի կառավարման համակարգի այդ ոլորտը:



Միջադեպերի հետաքննության համատեղ մեխանիզմները անհրաժեշտություն

Անցած շաբաթվա ընթացքում Արցախյան հիմնախնդիրը քննարկման առարկա է դարձել մի շարք հանդիպումների եւ նիստերի ընթացքում: Նոյեմբերի 9-ին Վիեննայում ԵԱՀԿ Մշտական խորհրդի նիստ է հրավիրվել, որտեղ հայտարարվել է, որ դառաբաղյան հակամարտության ռազմական լուծումն անթույլատրելի է եւ պետք է զսպող մեխանիզմներ ներդրվեն:

ԵԱՀԿ-ում Ռուսաստանի մշտական ներկայացուցիչ Ալեքսանդր Լուկաշելիչը ԵԱՀԿ Մշտական խորհրդի նիստին հայտարարել է. «ԵԱՀԿ Միևսկի խմբի համանախագահների միջնորդական առաքելության արդյունավետության անհրաժեշտ պայման է տարածաշրջանում խաղաղության ու կայունության պահպանումը: Շփման գծում եւ ադրբեջանահայկական սահմանում կայունության շահերից է բխում նաեւ հակամարտության գոտում զինված միջադեպերի հետաքննության համատեղ մեխանիզմների ստեղծումը»:

ԵԱՀԿ-ում ԱՄՆ գործերի ժամանակավոր հավտարմատար Հարրի Զամիանը ԵԱՀԿ Մշտական խորհրդի նիստում, խոսելով Լեռնային Ղարաբաղի հակամարտության մասին, նշել է. «Մենք ուրախ ենք, որ նախագահները համաձայնել են հրատապ քայլեր ձեռնարկել շփման գծի երկայնքով լարվածության թուլացման համար, ու մենք կողմերին խրախուսում ենք օգտագործել այս դրական պահն ու զերծ մնալ փոխադարձ մեղադրանքներից», -ասել է Հարրի Զամիանը՝ ավելացնելով, որ կիսում են կողմերի հիասթափությունը, որ այս հակամարտությունը չափազանց եր-

կար է տեւում, եւ որ ստատուս-քվոն անընդունելի է:

Վիեննայում ԵԱՀԿ Մշտական խորհրդի նիստին ելույթ է ունեցել նաեւ հայկական պատվիրակության ղեկավար, դեսպան Արման Կիրակոսյանը:

Հայկական կողմը հաստատել է, որ վերջին շրջանում համանախագահները ստիպված են եղել հասցեական հայտարարություններով նախանշել զինադադարը խախտող կողմին, ինչն անհրաժեշտ է շփման գծում լարվածության նվազեցման համապատասխան մեխանիզմների բացակայության պայմաններում:

Հայկական պատվիրակության ղեկավարը վերահաստատել է հայկական կողմի անվերապահ աջակցությունը Վիեննայի եւ Սանկտ-Պետերբուրգի պայմանավորվածություններին, որոնք նախատեսում են ԵԱՀԿ հետաքննության մեխանիզմների ստեղծում եւ ԵԱՀԿ Գործող նախագահի անձնական ներկայացուցչի գրասենյակի ընդլայնում:

Կիրակոսյանը նշել է նաեւ, որ Ադրբեջանը մինչ օրս խոչընդոտում է այդ պայմանավորվածությունների իրագործմանը եւ կանոնավոր խախտում հրադադարի ռեժիմը:

Ադրբեջանական կողմը, սակայն, հերթական անգամ հրաժարվել է այս սցենարից: «2017 թվականի հոկտեմբերի 16-ին ժնեւում Ադրբեջանի եւ Հայաստանի նախագահների բարձր մակարդակով հանդիպումը քայլ է ճիշտ ուղղությամբ: Մենք սպասում ենք, որ համանախագահները գործնական քայլեր կձեռնարկեն բանակցությունների ակտիվացման նպատակով», - նշված է ադրբե-

ջանական պատվիրակության հայտարարությունում:

Իսկ նոյեմբերի 14-ին աշխատանքային այցելությամբ Մոսկվայում գտնվող ԱԳ նախարար Էդվարդ Նալբանդյանը հանդիպել է ԵԱՀԿ Միևսկի խմբի համանախագահներ Իգոր Պոպովին, Ստեֆան Վիսկոնտին եւ Էնդրյու Շիֆերին: Հանդիպմանը ներկա էր ԵԱՀԿ գործող նախագահի անձնական ներկայացուցիչ Անջեյ Կասպրիկը: Չրուցակիցները քննարկել են Վիեննայում, Սանկտ Պետերբուրգում եւ ժնեւում տեղի ունեցած գազաթափողվների ընթացքում ձեռք բերված պայմանավորվածությունների իրականացմանն ուղղված քայլերը:

Քննարկվել է առաջիկայում Հայաստանի եւ Ադրբեջանի արտգործնախարարների հանդիպում կազմակերպելու հնարավորությունը: «Հաշվի առնելով հոկտեմբերի 16-ին ժնեւում կայացած հանդիպումը, համանախագահները ծրագրում են մինչեւ տարեվերջ կազմակերպել երկու երկրների արտգործնախարարների հանդիպումը: Իսկ մինչ այդ համանախագահները առանձին կհանդիպեն ՀՀ եւ Ադրբեջանի արտգործնախարարների հետ: Ներկայումս ռուսաստանցի համանախագահը իր ամերիկացի եւ ֆրանսիացի գործընկերոջ հետ աշխատում են հանդիպման վայրի եւ ժամկետի հստակեցման ուղղությամբ»:

Հաջորդ շաբաթ՝ նոյեմբերի 19-20-ին, Ռուսաստանի արտաքին գործերի նախարար Սերգեյ Լավրովը մեկօրյա այցերով կլինի Բաքվում եւ Երեւանում: Այցի օրակարգում դառաբաղյան կարգավորումն է:

Բյուջե 2018-ի քննարկումներ

Նոյեմբերի 10-ին տեղի է ունեցել 2018 թվականի պետական բյուջեի նախագծի քննարկմանը նվիրված կառավարության նիստ Արցախի Հանրապետության նախագահ Բակո Սահակյանի նախագահությամբ:

Բ.Սահակյանի խոսքով՝ համախառն ներքին արդյունքի աճը լինելու է գալիք տարվա տնտեսական թիրախներից մեկը: Նշելով, որ այս տարի տնտեսական աճի ցուցանիշը մոտ 15 տոկոսի սահմաններում է կանխատեսվում՝ նախագահը հայտարարեց, որ 2020 թվականին Արցախի ՀՀ-ն պետք է հասնի 310 միլիարդ դրամի:

«Այս ամենին հասնելու համար առաջին հերթին անհրաժեշտ է լինելու բոլոր նախատեսված ծրագրերի պատշաճ իրականացում, բյուջետային միջոցների նպատակային օգտագործում, միջոցների օգտագործման վերահսկողության բարձր մակարդակի ապահովում, իրատեսական ծրագրերի մշակում եւ իրականացում»,- ասել է երկրի ղեկավարը՝ ընդգծելով, որ մեր երկրի գալիք տարվա գլխավոր ֆինանսատնտեսական փաստաթուղթն արտացոլում

է պետական քաղաքականության հիմնական ուղղությունները եւ իր էությամբ իրատեսական է:

Համապատասխան գեկույցներով եւ ելույթներով հանդես են եկել մի շարք նախարարներ:

Իր խոսքում Նախագահ Սահակյանն ընդգծել է, որ տեղի է ունեցել պետական բյուջեի նախագծի շահագրգիռ եւ բազմակողմանի քննարկում՝ նշելով, որ բյուջեի նախագիծը կարող է հավանության արժանանալ:

Գործադիր մարմնի հավանության արժանացած օրինագծերն ու պետական ծրագրերը նոյեմբերի 15-ին ներկայացվել են Ազգային ժողով՝ տալով խորհրդարանական քննարկումների մեկնարկը:

Ֆինանսների նախարար Գրիգորի Մարտիրոսյանը ԱԺ-ում ներկայացրել է գալիք տարվա ֆինանսական գլխավոր փաստաթուղթն ու նշել, որ 2018 թ. սոցիալ-տնտեսական քաղաքականության առանցքային շեշտադրումները, որոնք բխում են Արցախի Հանրապետության նախագահի 2017-2020 թթ. ծրագրի դրույթներից, նպատակադրված են

լինելու միջնաժամկետում կայուն տնտեսական աճի ապահովմանն ուղղված ծրագրերի իրականացմանը, պետականաշինությունը եւ պաշտպանունակությունն ապահովող ինստիտուտների զարգացմանը: Առաջարկվող բյուջեով նախատեսվում է ապահովել 8% տնտեսական աճ:

Պետական նախարար Արայիկ Հարությունյանը պարզաբանումներ է տվել բյուջեի նախագծի որոշ ուղղությունների վերաբերյալ եւ պատգամավորների հնչեցրած հարցերին՝ նշելով, որ գործադիրի համար առաջնային է երկարաժամկետ տնտեսական կայուն աճի հիմքերի ստեղծումը: Պետնախարարն ընդգծել է, որ գալիք տարում ամենաբարձր տեսակարար կշիռը նախատեսվում է ունենալ գյուղատնտեսության, էներգետիկայի եւ վերամշակման ոլորտներում:

Նոյեմբերի 20-ից պետական բյուջեի նախագծի քննարկումները կշարունակվեն ԱԺ մշտական հանձնաժողովներում:

«ԱՊՍՈՍԺ»

Հոկտեմբերյան հեղափոխությունը խանգարեց ավելի մեծ տարածքի վրա մեր հայրենիքի անկախության հռչակմանը



100 տարի առաջ՝ 1917թ. հոկտեմբերի 25-ին (ն. տ. նոյեմբերի 7-ին), տեղի ունեցով իրադարձություն, որը շատ եական ու կրոնական ազդեցություն ունեցավ հետագա պատմության վրա: Ոմանք այն կոչեցին «Հոկտեմբերյան մեծ հեղափոխություն», մյուսները՝ «Հոկտեմբերյան հեղաշրջում», սակայն, անկախ օգտագործած տերմինաբանությունից, այն ցնցեց ամբողջ աշխարհը: Բոլշևիկները Ռուսաստանի մայրաքաղաք Պետրոգրադում (Սանկտ Պետերբուրգ) զինված հեղաշրջում կատարեցին եւ իշխանությունը վերցրին իրենց ձեռքը: Վերջ տրվեց փետրվարյան հեղափոխությունից հետո Կերենսկու ձեւավորված ժամանակավոր կառավարությանը, ձախողվեց Սահմանադիր ժողովի հրավիրումը:

Հոկտեմբերյան հեղաշրջման հաղթանակով սկսվեց Ռուսաստանի խորհրդային պատմության ժամանակաշրջանը: Այն հիմք դրեց նաեւ հորհրդային Միության կազմավորմանը, որի կազմում էր նաեւ Հայաստանը մինչեւ 1991 թ: 1991-ի դեկտեմբերի 8-ին Բելովեժյան թափուտում կնքված եռակողմ համաձայնագրով (Ռուսաստան, Ուկրաինա, Բելառուս) հորհրդային Միությունը կազմալուծվեց:

Հայոց պատմության այդ ժամանակաշրջանի, Հայաստանի եւ Արցախի հետագա զարգացման վրա դրա ունեցած ազդեցության եւ այլ հարցերի շուրջ «Ապառաժ»-ը գրուցել է ԱՀ ԱԺ «Դաշնակցություն» խմբակցության պատգամավոր, պատմաբան Ռիտա Մնացականյանի հետ:

- Տիկին Մնացականյան, Հոկտեմբերյան հեղափոխությունից անցել է 100 տարի, այժմ կարելի է քիչ թե շատ օբյեկտիվ գնահատական տալ հեղափոխության ազդեցությանը համաշխարհային եւ հայ ժողովրդի պատմության վրա: Ըստ Ձեզ՝ այն ինչպե՞ս կարելի է գնահատել:

- 100 տարին պատմության համար այնքան էլ մեծ ժամանակաշրջան չէ, եւ երբեք հնարավոր չէ օբյեկտիվ գնահատական տալ որեւէ պատմական իրադարձության, որովհետեւ այն բազմաշերտ է, բազմակողմանի ու բազում ազդեցությամբ:

Հոկտեմբերյան հեղաշրջման պատմական նշանակության վերաբերյալ տեսակետները բախվում են: Իմ սերունդն ապրել է հորհրդային Միության ժամանակաշրջանում, սովորել է այն դասագրքերով, որոնք անընդհատ մեզ ներշնչել են, որ դա հիրավի մեծ հեղափոխություն էր եւ հոկտեմբերը փրկեց հայ ժողովրդին: Իմ կարծիքով, դա այդպես չէ: Հոկտեմբերը աղետ էր ոչ միայն ռուս ժողովրդի, այլեւ ոչ ռուս ժողովուրդների համար: Այդ հեղափոխությունից հետո ստեղծված բռնապետությունը բազմաթիվ ողբերգություններ առաջ բերեց այս տարածաշրջանում ապրող ժողովուրդների համար: Ես փորձում եմ հակառակ տեսանկյունից նայել, այսինքն՝ ինչ կլինե, եթե հեղափո-

խությունը չլիներ: Առաջին համաշխարհային պատերազմ. Հայաստանի արեւելյան հատվածը ռուսական կողմից ներգրավված էր պատերազմի մեջ: Բանակ զորակոչված հայերից բացի ռազմական գործողություններին մասնակցում էին նաեւ հայկական կամավորական ջոկատները: Ռուս-թուրքական ճակատում հայերը Հայաստանի ազատագրության հնարավորություն էին տեսնում: Եվ ռուսական բանակը, անկախ հետագա նպատակներից, հայ կամավորների հետ ազատագրեց Արեւմտյան Հայաստանի մի շարք տարածքներ: 1916թ. կնքվեց Սայքս-Պիկոյի գաղտնի պայմանագիրը, որով նախատեսվում էր, թե Անտանտի հաղթանակից հետո ինչ տարածքներ պիտի անցնեին դաշնակից երկրներին: Ռուսական զորքի կողմից Արեւմտյան Հայաստանի գրավված տարածքները պայմանագրով ընդգրկված էին Ռուսաստանի կազմում: Սակայն հեղափոխությունը խանգարեց իրագործել այն: Ես ամենից առաջ նախընտրում եմ, որ Հայաստանը անկախ երկիր լինի, բայց որպես պատմաբան գիտեմ, որ Ռուսաստանին ենթակա տարածքներում հայ ժողովրդի ֆիզիկական բնաջնջման վտանգ չի եղել: Եվ Ռուսաստանի ազդեցության տարածումը ազատագրված տարածքներում հայ ժողովրդի համար փրկություն կլինե:

հորհրդային շրջանում մեզ անընդհատ համոզում էին, որ հեղափոխությունը փրկություն էր, բայց իրականում հակառակն է: Եթե հեղափոխությունը չլիներ, հայ ժողովրդի վիճակը շատ ավելի բարենպաստ կլիներ: Նույն վերաբերում է նաեւ Ռուսաստանին: Դա ոչ թե ռուս ժողովրդի հեղափոխությունն էր, այլ դրսի ուժերի կողմից կազմակերպված ավանտյուրա: Այն տապալեց Ռոմանովների արքայատոհմը, որի ստեղծումով սկսվել էր Ռուսաստանի զարգացման ուղին: Հայ ժողովուրդը շատ մեծ հույսեր էր կապում Ռուսաստանի հետ, սակայն այս հեղափոխությունը խանգարեց, խանգարեց ավելի մեծ տարածքի վրա հայրենիքի անկախության հռչակմանը: 1918թ. Հայաստանի անկախությունը հռչակվեց 12.000 քառ. կմ տարածքի վրա, որը 1.5 տարի հետո հասավ 60.000 քառ.կմ: Սերը գծվեց գրեթե այն սահմաններով, որ գրավել էր ռուսական զորքը:

Ոչ ոք չի կարող հաստատ ասել, թե ինչ կլինե իրականում, բայց փաստերի տրամաբանությունը դրան է հանգեցնում:

- ԽՍՀՄ տարիներին ծնված եւ դաստիարակված մեր որոշ հայրենակիցներ որոշակի կարոտախտով են խոսում ԽՍՀՄ տարիների մասին՝ մատնանշելով հորհրդային Միության տարիների՝ իրենց կարծիքով առկա առավելությունների մասին: Արդյո՞ք համաձայն եք այդ կարծիքների հետ:

- Իհարկե, հորհրդային Միությունը հզոր տնտեսական երկիր էր, եւ կյանքի որոշակի կայունություն, խաղաղություն կար: Սակայն սա չի կարելի ներկայացնել որպես ուսույթ: Նրանք կարողում են հիշում հորհրդային Միության գոյության վերջին 20 տարիները: Բայց այդ միությունը ստեղծվել է արյունով, բռնությամբ: Երբ Հայաստանում հաստատվեցին խորհրդային կարգեր, Կոմունիստական կուսակցությունն այստեղ ոչ մի հենարան չուներ: Հետո շատերը պարտադրված դարձան կոմունիստներ: Հիշենք, թե ինչպես փետրվարյան ապստամբությունից հետո, 30-ական թթ. հազարավոր խելոք ուղեղներ նետվեցին բանտերը, գնդակահարվեցին: Եվ այս բռնությունները միայն հայերի նկատմամբ չէին իրագործվում: Սա իսկական բռնատիրական պետություն էր: Մենք փոքր ժողովուրդ ենք, եւ այդ բռնությունն իր ամբողջ ուժով, Չարենցի լեզվով ասած, «Ստալինյան սապրոզով» շատ բան կոխկրտեց: Այդ տեսակետից՝ Ղարաբաղը կրկնակի ճնշման էր ենթարկ-

վում եւ հորհրդային Միության, եւ Ադրբեջանի կողմից:

Եվ այս ամենը հաշվի առնելով՝ չի կարելի դրական արտահայտվել տվյալ ժամանակաշրջանի մասին: Իհարկե, սկզբնական շրջանում կարողացան մասսաներին խանդավառել, ոգեւորել: Եթե այդ ոգեւորությունը ճիշտ հունի վրա դրվեր, իսկապես օրինակելի պետություն կդառնար: հորհրդային Միության սոցիալիզմը Մարքսի, Էնգելսի քաղաքած սոցիալիզմը չէր, այն ստալինյան մոդելն էր, որը շատ հեռու էր իսկական սոցիալիզմից: Բնության մեջ բարձրագույն արժեքը մարդկային կյանքն է, որը զոհ գնաց այդ ամենին՝ հոգեւոր, մտավոր, ֆիզիկապես: Դա ոչ միայն Ռուսաստանի, այլեւ մարդկության պատմության մեջ ամենաաղետալի ժամանակաշրջաններից է: Ոչ մի երկրում ոչ մի հեղափոխություն հետեւանքով այդքան գոհեր չեն եղել, որքան այդ ժամանակ: Ճիշտ է, Ստալինի մահից հետո որոշակի ազատություններ տրվեցին, բայց հնի ու Նորի բախումներ եղան ու Նորից մարդկային զոհեր, որը ոչ մի բանով հնարավոր չէ վերականգնել:

հորհրդային Միությանը գլոբալիզացիայի հիմնադիր կարելի է համարել: Բոլոր ազգերի ազգային արժեքներն աստիճանաբար մարում էին՝ զոհ գնալով այդ ընդհանուր ընտանիքի գաղափարին: Ավելին, ազգային արժեքների կրողները համարվեցին վտանգավոր պետության համար:

Թվում էր, թե ռուսականացումը ամուր հիմքերի վրա էր: Բայց ինչքան էլ ռուսական դպրոցներ բացվեցին, ինչքան էլ քարոզչություն տարան, ազգային ոգին ոչ մի ժողովրդի մեջ չմարեց: Ղարաբաղյան շարժումը փորձաքար էր ամբողջ հորհրդային Միության համար: Բավական էր մի փոքր ժողովուրդ խոսեր իր ազգային արժեքների մասին, իսկույն բոլորը ոտքի կանգնեցին:

- Արդյո՞ք Ռուսաստանի ներկայիս քաղաքականության մեջ տեսնում եք ծավալապաշտական նկրտումներ:

- Նախ մինչեւ ԵԱՏՄ ստեղծումը, հորհրդային Միության փլուզումից անմիջապես հետո ստեղծվեց ԱՊՀ-ն՝ հեռահար նպատակներով. այն պիտի դառնար մի Նոր ԽՍՀՄ: Քանի որ այն ազգային-ազատագրական շարժումների վերելքի ժամանակաշրջանն էր, վերականգնված արժեքները գերիշխող էին, եւ ԱՊՀ-ն այդպես էլ չկայացավ: Թեկուզ ստեղծվեցին ԱՊՀ կենտրոնական մարմիններ, բայց այն մնաց որպես դաշինք:

Ռուսաստանը սկզբնական շրջանում դեռ թույլ էր, սակայն ուներ ներքին հզոր ռեսուրսներ, աստիճանաբար Նորից վերագտավ իրեն: Ներկայիս համաշխարհայինացման համակարգում, բնական է, որ Ռուսաստանը ձգտում է դառնալ առանձին բեւեռ, որի հետ հաշվի կնստեին: Ռուսաստանը իր ազդեցության գոտիներն է փորձում մեծացնել: Չեմ կարծում, թե դա հիմա Ռուսաստանին հաջողվում է:

- Այսօր ի՞նչ կարելի է անել խորհրդային տարիների աղետալի հետեւանքները վերացնելու համար:

- Մենք այսօր Հոկտեմբերյան հեղափոխությանը եւ ընդհանրապես հորհրդային Միությանը Նորովի գնահատական տալու խնդիր ունենք: Մեր մի շարք փողոցներ կրում են Լենինի զինակիցների անունները, որոնք Արցախի հետ կապ չունեն, ոչ մի բան չեն արել Արցախի համար: Մյասնիկյանի լուռ համաձայնությամբ է Ղարաբաղը բռնակցվել Ադրբեջանին: Նրա անունով փողոցներ, քաղաքներ կան ՀՀ-ում եւ ԱՀ-ում: Իսկ հայ ժողովրդի ազատության, անկախության համար պայքարած, զոհված մեր բազմաթիվ հայորդիների անուններ մոռացության են տրվել: Ուրեմն պետք է արդար գտնվել պատմության նկատմամբ, արդարացի գնահատական տալ եւ գնահատանքի արժանացնել արժանավորներին:

Հարցազրույցը՝ Տաթևիկ ԱՐԱՋԱՆՅԱՆ

Արեւմտյան ժողովրդավարություն. իրական, թե՞ երեւութական արժեք



Եվ իրոք, արեւմտյան ժողովրդավարություն հասկացությունը, որի մասին գրեթե անընդհատ տարփողվում է արեւմտյան, այդ թվում՝ եվրոպական տարբեր հարթակներից, արդյո՞ք ներքուստ իրական միջուկ ունի, թե՞ միայն եւ կամ առավելապես սոսկ արտաքին փայլով է աչքի ընկնում: Արդյո՞ք, որպէս հանրային կառավարման եւ միջազգային կյանքի կարգավորման արդի քաղաքակրթական արժեք, ինչպիսին եվրոպական մայրաքաղաքներից հետեւողականորեն ներկայացվում ու պարտադրվում է մնացյալ աշխարհին, այն միանշանակ է իր ընկալումներում եւ, մանավանդ, դրսեւորումներում: Մի՞թէ իրատեսական է Ուիլսոնի Զերչիլի հայտարարությունն առ այն, թէ «Ժողովրդավարությունը միգուցէ կառավարման լավագույն ձեւը չէ, սակայն մարդկությունն ավելի լավը դեռ չի մտածել»:

Խնդիրը, որքան էլ թվում է՝ արտաքուստ գրավիչ եւ, իբրեւ այդպիսին, ընդօրինակման արժանի, առավել եւս, որ ամրագրված է միջազգային հիմնարար օրենքներում ու ենթակա ամենուրեք իրականացման, այնուամենայնիվ, ցավոք, հետզհետե ավելի ու ավելի մտահոգիչ ազդակների տեղիք է տալիս նորագույն պատմության վերջին մի քանի տասնամյակում տեղի ունեցող զարգացումների համատեքստում: Ընդ որում, տարօրինակն այն է, որ այդ ազդակներն առանձնապես բարձր ու ցավագին են ինչու ժողովրդավարության բնօրրան հռչակված եվրոպայում, որտեղ նրա իսկ մատուցմամբ առաջարկվող այդ՝ թվում է թէ համամարդկային նշանակության արժեքի ուսնահարման փաստերը շարունակաբար խոր հիասթափության տեղիք են տալիս, եթե ոչ՝ ավելին:

Օրինակներ՝ ինչքան ուզեք: Բայց կանգ առնենք ամենավերջին, անհամեմատ թարմ օրինակի վրա: Խոսքս Կատալոնիայում վերջին շրջանում տեղի ունեցող իրադարձությունների եւ դրանց նկատմամբ արեւմտյան ժողովրդավարության վերաբերմունքի մասին է:

Նախ, որպէս տեղեկանք. Կատալոնիան ինքնավար մարզ է Իսպանիայի Թագավորության հյուսիսարեւելյան մասում՝ Բարսելոն մայրաքաղաքով: Ենթադրվում է, որ երկրամասի անվանումն առաջացել է գոթերի եւ ալանների ցեղանուններից՝ Գոթլանդիա, որը, հետագայում ձեւափոխվելով, դարձել է Կատալոնիա: Մարզի տարածքը կազմում է ավելի քան 32 հազար քառակուսի կիլոմետր: Մի քանի դար է, ինչ շարունակվում է կատալոնացիների պայքարն Իսպանիայի կազմից դուրս գալու համար: 1714թ. սեպտեմբերի 11-ին, որը նշվում է որպէս Կատալոնիայի ազգային օր, երկրամասը կորցրել է իր անկախությունը: Այն ինքնավարություն է ստացել միայն 1979-ին՝ բռնապետ Ֆրանցիսկո Ֆրանկոյի մահվանից հետո: Սակայն ինքնավարությունը չի գոհացրել կատալոնացիներին: Իսպանիայից անջատմանը նպաստում է նաեւ այն հանգամանքը, որ Կատալոնիայի ինքնավար մարզը, որտեղ ապրում է Իսպանիայի բնակչության 16 տոկոսը, տալիս է երկրի համախառն ազգային արդյունքի 25 տոկոսը: Միեւնույն ժամանակ, Կատալոնիան 16 միլիարդ եվրո ավելի շատ է վճարում պետական բյուջե, քան ստանում է: Դրա հետ մեկտեղ՝ Կատալոնիայի ազգային պարտքը գերազանցում է 51 միլիարդ եվրոն: «Մադրիդը մեզ կողոպտում է» կարգախոսը դարձել է ազատագրական շարժման կարգախոսներից մեկը:

Եվ ահա, հիմք ընդունելով ազգային ինքնորոշման իր իրավունքը, կատալոնական ժողովուրդը հերթական անգամ փորձում է անկախության հասնել եւ հռչակել իր ինքնիշխան հանրապետությունը: Հերթական անգամ, քանզի անկախության հանրաքվեն պետք է տեղի ունենար 2014թ., սակայն այն արգելափակվել էր Իսպանիայի իշխանությունների կողմից: Ուստի, հանրաքվեի փոխարեն իրականացվեց անկախության վերաբերյալ մարզի բնակչության կարծիքի հարցում, ինչը որեւէ իրավա-

բանական ուժ չի ունեցել: Հանրաքվեի եւս մեկ փորձի ձախողումը կնշանակեր կատալոնացիների անկախության հետաձգում՝ առնվազն մոտակա մի քանի տարիների ընթացքում:

Նախապատրաստվելով նոր հանրաքվեի, մարզային խորհրդարանը դեռեւս անցած սեպտեմբերի 7-ին ընդունել էր օրենք, որը կարգավորում է տարածաշրջանի հասարակական-քաղաքական կյանքը եւ նախատեսված էր կիրառել անկախության հանրաքվեից մինչեւ անկախ Կատալոնիայի սահմանադրության ընդունումն ընկած ժամանակահատվածում: Ընդ որում, ինչպէս երեք տարի առաջ էր, այս անգամ եւս Կատալոնիայի անկախացման ողջ ընթացակարգն իրականացվում էր միանգամայն խաղաղ, օրենսդրական ճանապարհով՝ Իսպանիայում գործող, նաեւ միջազգային իրավական նորմերին համապատասխան:

Եվ, ի վերջո, որպէս առաջին քայլ, հոկտեմբերի 1-ին ինքնիշխանության ձգտող մարզում անցկացվեց հանրաքվե: Կենտրոնական իշխանությունները բոլոր միջոցները ձեռնարկում էին, այդ թվում՝ գործադրելով երկրի այլ մարզերից այդտեղ տեղափոխված անվտանգության ուժերի ստորաբաժանումները, արգելակելու ու խափանելու համար քվեարկության ընթացքը: Ու, չնայած այդ ամենին, անգամ այն հանգամանքին, որ բնակչության մի զգալի հատված չմասնակցեց համաժողովրդական քվեարկությանը, այնուամենայնիվ, անկախության հանրաքվեն կայացավ: Մասնակիցների գերակշիռ մեծամասնությունը՝ ավելի քան 90 տոկոսը, կողմ քվեարկեց անկախությանը: Որպէս երկրորդ օրինական քայլ՝ ինքնավարության խորհրդարանը, հիմք ընդունելով հանրաքվեի արդյունքները, հոկտեմբերի 27-ին ընդունեց բանաձեւ Իսպանիայից անջատվելու եւ անկախություն հռչակելու մասին:

Գնդակը, ինչպէս ասում են, նետված էր մրցակցի դաշտ: Եվ կենտրոնական իշխանությունները չհապաղեցին դիմել հերթական հակաքայլերի՝ օգտագործելով ինչպէս օրենսդրական, վարչական ու ֆինանսատնտեսական լծակները, նույնպէս եւ եվրոպական գրեթե բոլոր կառույցների ու պետությունների առաջնորդների հայտարարությունները՝ Կատալոնիայի անկախության հանրաքվեի արդյունքները չճանաչելու մասին: Ի միջի այլոց նշենք, որ բացասական արձագանքների այդ հորձանուտում արձանագրվել է կատալոնացիների անկախության ձգտումներին համահունչ ընդամենը երկու ծայն՝ Արցախի Հանրապետության ԱԳՆ պաշտոնական հայտարարությունը եւ Կորսիկայի խորհրդարանի նախագահ ժան-Գի Թալամոնի թվիթթերյան գրառումը:

Իսպանիայի պատմության մեջ առաջին անգամ ասպարեզ հանվեց սահմանադրության 155-րդ հոդվածը, որի դրույթների համաձայն՝ բոլոր այն դեպքերում, երբ ինքնավար մարզերը «չեն կատարում իրենց սահմանադրական պարտավորությունները», ինչն «նապես խախտում է Իսպանիայի շահերը», կառավարությունն իրավունք ունի երկրի Սենատից ստանալ թույլտվություն՝ բոլոր 17 ինքնավար մարզերի օրենսդիր իշխանության մարմինների կողմից ընդունված ազգային օրենսդրությունների նկատմամբ վեթո կիրառելու, ընդհուպ՝ մինչեւ տարածքային կառավարություններն ու խորհրդարանները ցրելու, ավելին՝ ինքնավարության կարգավիճակից այս կամ այն մարզին գրկելու եւ այնտեղ ուղիղ կենտրոնական կառավարում մտցնելու իրավունք: Ուստի եւ, հիմք ընդունելով սահմանադրական այդ նորմը, Իսպանիայի Սենատը հաջորդ օրը՝ հոկտեմբերի 28-ին, համապատասխան որոշմամբ թույլատրեց, իսկ կենտրոնական կառավարությունը ցրեց կատալոնական խորհրդարանն ու կառավարությունը եւ ուղղակի կառավարում մտցրեց ինքնավար մարզում: Միեւնույն ժամանակ, իսպանական դատական մարմինները քրեական գործեր հարուցեցին Կատալոնիայի գործադիր եւ օրենսդիր իշխանությունների ղեկավարների նկատմամբ՝ մեղադրելով ապստամբության, խռովության եւ յուրացումների մեջ: Մարզի օրենսդիր մարմինն ստիպված եղավ ճանաչել խորհրդարանը ցրելու մասին կենտրոնական կառավարության որոշումը եւ աշխատանքները դադարեցրեց մինչեւ Մադրիդի կողմից ղեկտեմբերի 21-ին նշանակված վաղաժամկետ ընտրությունները: (Ի դեպ, եթե հետադարձ հայացքով դիտարկենք, ապա դժվար չէ նկատել, որ կատալոնական իրադարձությունների այդ զարգացումն ինչ որ չափով զուգահեռվում է հակազդեցության այն դրսեւորումների հետ, որոնք Մոսկվան եւ Բաքուն իրականացնում էին՝ հակազդելով արցախահայության ազգային-ազատագրական պայքարին. խորհրդային ՆԳ ներքին գործերի ընտրակայում մարզի տարածքում, ԼՂԻՄ մարզ-խորհրդի 1988թ. փետրվարի 20-ի նիստի ուժային խոչընդոտում, մարզխորհրդի լիազորությունների դադարե-

ցում, Շարժման ղեկավարների եւ գործիչների քրեական հետապնդում, մարզում ուղիղ կառավարման ձեւի կիրառում Մոսկվայից եւ ապա՝ Բաքվից, ԼՂԻՄ կամայական լուծարում եւ այլն):

Եվ այսպէս, թագավորական Իսպանիան եւ նրա հետ մեկտեղ, այսպէս կոչված, «ժողովրդավարության դրոշակակիր» եվրոպական երկրներն ու կառույցները միանշանակ ու միաձայն մերժեցին սեփական ճակատագիրն ինքնուրույն կերպով տնօրինելու, իր ապագան ինքնիշխան կառուցելու եւս մեկ ժողովրդի կամարտահայտությունը, ժողովուրդ, որ բուն եվրոպացի է իր ազգային պատմական հայրենիքով եւ, ի տարբերություն մեզ՝ հայերիս, բնակվում է կարծես թէ քաղաքակիրթ ժողովուրդների ու նրանց ժողովրդավար պետությունների բարենպաստ միջավայրում: Անշուշտ, Իսպանիայի Թագավորությունը, անկախ որդեգրած կոշտ դիրքորոշումից, այնուամենայնիվ, արժեքային համակարգով անհամեմատելի է հետամնաց, բռնատիրական Ադրբեջանից: Այս համատեքստում, ինչ խոսք, չէի ուզեմս դուզն իսկ թերագնահատել կատալոնացիների կամքը, բայց անհնար է չտեսնել հոգեվիճակների համեմատության բոլոր մեծ ու փոքր եզրերն ու տարբերությունները մեր եւ նրանց միջեւ: Այդ, մենք դիմացանք բոլոր դաժան փորձություններին՝ սպառնալիքներից մինչեւ քարկոծումներ, բռնատեղահանումներից մինչեւ զանգվածային կոտորածներ, կառավարման մարզային ու շրջանային մարմինների լուծարումից մինչեւ տնտեսական շրջափակում, մինչեւ մեր դեմ սանձազերծված լայնածավալ պատերազմ: Ինչպէս եվրոպական երկրների եւ եվրոպական կառույցների առաջնորդներն են ներկայումս դատափետում կատալոնական ժողովրդի անկախության հանրաքվեն ու նրա արդյունքները, Կատալոնիայի մարզային խորհրդարանի ընդունած անկախության հռչակագիրը, նույն կերպ Մոսկվան եւ նրա հետ մեկտեղ խորհրդային կայսրապետության գրեթե բոլոր միութենական հանրապետությունների մայրաքաղաքները միաձայն ու միանշանակ խարազանում էին արցախահայության համաժողովրդական շարժումն իր խաղաղ, օրենսդրական դրսեւորումներով, 1988-ի փետրվարի 20-ից ի վեր Լեռնային Ղարաբաղի մարզխորհրդի ընդունած որոշումները, ԼՂՀ հռչակման մասին հռչակագիրը, Անկախության հանրաքվեն, 1-ին գումարման Գերագույն խորհրդի ընտրությունները: Ել չեմ ասում, որ ինչպէս Կատալոնիայի պարագայում է, ժողովրդավարության ասպետի քղամիդ հագած Արեւմուտքը, այլեւս բավարարված լինելով իր հետապնդած գերիսդրի իրականացմամբ, այն է՝ Ռոնալդ Ռեյգանի խնդրմամբ՝ «չարի կայսրություն» ԽՍՀՄ-ի փլուզմամբ եւ, ըստ երեւոյթին, այդքանով իսկ սպառնելով իր իսկ հռչակած արժեհամակարգի տեսական զինանոցը, մեկեն երես թեքեց ազատության հասնելու արցախահայության նվիրական մղումներից՝ աչք փակելով Ադրբեջանի գազանաբարո կամայականությունների հանդեպ: Արցախահայությունը մնաց միայնակ՝ իր թիկունքում ընդամենն ունենալով ավերիչ երկրաշարժից քայքայված, ինքն իսկ օգնության կարոտ Մայր Հայաստանը եւ աշխարհասփյուռ հայությունը: Ու տոկաց: Տոկաց ու հաղթեց: Հաստատակամորեն դրեց իր անկախության հիմքերը եւ ահա ավելի քան քառորդ դար է, ինչ այդ հիմքերի վրա քար առ քար իրար ագուցելով, հետեւողականորեն իր ինքնիշխան պարտականությունն է կառուցում: Ի հեճուկ մեր ժողովրդի բոլոր մեծ ու փոքր, հին ու նոր չարա-կամների: Ինչո՞ւ չէ՝ ի գարմանս մեր թվացյալ եվրոպական բարեկամների, որոնք այսօր էլ, ճամարտակելով ժողովրդավարության արժեքների, այդ թվում՝ ազգերի ու ժողովուրդների ինքնորոշման իրավունքի մասին, մեկվեկու բերանից խոսք թռցնելով՝ միջազգային ամենատարբեր հարթակներից ողջունում ու պաշտպանում են ազգային փոքրամասնությունների դժոխային բանտի վեճարկված Ադրբեջանի տարածքային ամբողջականությունը:

Բայց, այնուամենայնիվ, կարծում եմ՝ ի տարբերություն մեզ, կատալոնացիների բախտը մի բանում հաստատ բերել է. նրանք երջանիկ պատահականությամբ հազարավոր մղոններով հեռու են գտնվում Ադրբեջանի հորջորջվող պետության սահմաններից եւ, հուսանք, վաղ թե ուշ ընդհանուր հայտարարի կգան անհամեմատ քաղաքակիրթ իսպանացիների հետ՝ լինի դա մեկ ընդհանուր տանիքի, թե առանձին ազգային տանիքների ներքո: Դատելով ժողովուրդների ինքնորոշման հիմքով Արեւմտյան եվրոպայում սկիզբ առած ներկա եւ հետագա տեսանելի զարգացումների տրամաբանությամբ՝ երեւի թե համակեցության երկրորդ տարբերակով:

Միքայել ՀԱԶՅԱՆ

Ակնարկ. Ռիատի «Չափաւորականութեան» Թրքական Մեկնաբանումը



Ներսեսուտական իրադարձութիւնները, Լիբանանի վարչապետին Ռիատ կանչուիլն ու այնտեղէն ինչպէս յանկարծակի հրաժարականով Լիբանանի մէջ ստեղծուած իրավիճակը ստացած են ո՛չ միայն շրջանային, այլ նաեւ միջազգային ինչեղութիւն: Բացի այն իրողութենէն, որ այս նիւթերու մասին մեկնաբանական լրատուութիւնները արդէն քանի օրէ ի վեր կը զբաղեցնեն համաշխարհային լրատուամիջոցներու լուրերու առաջին հորիզոնականները, մէկ առ մէկ գերտերութիւններու ներկայացուցիչները ստեղծուած ճգնաժամի շուտափոյոթ լուծումի առաջադ

րանքը կը շեշտեն, հիմնականին մէջ գոնէ յայտարարողական մակարդակի վրայ զօրակցութիւն յայտնելով Լիբանանի պետութեան: Յայտարարութիւններու այս արշաւէն անմասն պիտի չմնար նաեւ Թուրքիոյ նախագահը, որ բառերու զգուշաւոր օգտագործումով նմանատիպ համահունչ յայտարարութիւն կատարեց՝ հեռաձայնային կապ հաստատելով Լիբանանի հանրապետութեան նախագահին հետ:

Ընդամենը օր մը առաջ սակայն, երբ տակաւին միջազգային արձագանգումներուն ալիքը չէր բարձրացած, Թուրքիոյ նախագահը ընկղմող խուսաճում կատարեց՝ հարցի կիզակետէն հեռացնելով ուշադրութիւնը Ռիատը քննադատութեան թիրախ դարձնելու աժան քարոզչական գործողութեամբ մը:

Այսպէս: Ան երկու օր առաջ քննադատեց Սեուտական Արաբիոյ գահաժառանգ Մուհամմետ Դըն Սալմանի վերջերս ուղղած՝ Սեուտական Արաբիան «չափաւորական իսլամութեան» օրրան դարձնելու կոչը՝ զայն նկատելով Արեւմուտքի արտադրութիւնը: Այս յղացքի առարկայացման համար իբրեւ օրինակ Երտոզլան կեդրոնացած է Սեուտական Արաբիոյ մէջ կիներու ինքնաշարժ վարելու արտօնու

թեան երեւոյթին վրայ:

Այժմ մտաբերել, թէ աշխարհի ուշադրութիւնը կեդրոնացուցած ներսեսուտական իրադարձութիւններու ամենէն թեժ պահուն, Թուրքիոյ նախագահը իբրեւ թէ պաշտօնական Ռիատը կը քննադատէ, կտրուկ շեղումային անցում կատարելով այլ հարցի, որ տեսքով կենցաղային ընկերային խնդիր է. յամենայն դէպս չափաւորականութեան հասկացողութեան արժարժումին իւրովի մեկնաբանութիւն տալով, խորքին մէջ Երտոզլանը թէ՛ քննադատած կ'ըլլայ Ռիատը, թէ՛ շրջանցած կ'ըլլայ հիմնական հարցը:

Այս խուսաճումը նաւարկելու շատ տեղ չունի եւ խորքին մէջ սուզուելու կամ աւելի ճիշդ շատ արագ ընկղմելու մատնուած է:

Տակաւին. կրկնակի իմաստ ունի չափաւորականութիւն հասկացողութեան իւրովի մեկնաբանումը այս պարագային: Չափաւորական իսլամութիւն եզրաբանութիւնը Արեւմուտքին վերագրելով՝ Երտոզլան այս որակումի օգտագործումին դէմ կ'արտայայտուի: Աւելի ճիշդը, անուղղակիօրէն կ'ուրուագծէ նախաբան մը, որ ի վերջոյ կ'ուզէ փոխանցել, թէ ներսեսուտական փոփոխութիւնները ներշնչուած են Արեւմուտքէն: Այս յայտարարութիւնը կը թուի հաշուի առած ըլլալ Թեհրանի մօտեցումը:

Բայց ահա անմիջապէս շեղումը. չա

փաւորականութիւնը, որ այս պարագային քաղաքական նոր գործընթացներու զսպանակող մեկնարկի դեր ստանձնող ըլլալու նախադրեալները կը փոխանցէ, իր բացատրութեամբ կը կապուի ինքնաշարժ վարելու արտօնութեան:

Թափանցիկութիւն, ժողովրդավարացում, հակափտածութեան արշաւ, մարդկային իրաւունքներ, հակահաբեկչական պայքար եւ նմանօրինակ անառարկելի կարգախօսներ այսօր հիմնովին կը ծառայեն աշխարհաքաղաքական ծրագիրներու կիրարկման համար հարթիչ գլանի բանեցման շղարշներ ապահովելու: Կը թուի, որ չափաւորական իսլամութիւնը նոր կարգախօսով տարածաշրջանին մէջ կացութիւններ ստեղծելու պիտի ծառայէ: Ասիկա իր հերթին:

Մանրադիտակի տակ այս պարագային պետք է տեղադրել Մոսկուա-Թեհրան առանցքին հաշիւը կատարող Ռիատն ու Արեւմուտքը քննադատող բայց հիմնական իրադարձութիւններուն մասին գնահատական տալէ խուսափելու Անգարայի վարիչին ծախող խուսաճումը: Այս գործընթացները կը թուին երկարատեւ ըլլալ, եւ Թուրքիոյ նախագահը Ռիատի չափաւորականութիւնը քննադատելու կենցաղային այլ օրինակներ պետք է որոնէ:

«Ա.»
aztagdaily.com

Արցախից միշտ մեծ էներգիա եմ ստանում. Վահագ Ռաշ

Նոյեմբերի 11-ին Շուշիի կերպարվեստի թանգարանի բեմում կայացել է հայտնի երգիչ, երգահան Վահագ Ռաշի՝ Վահագ Ռուշանյանի «Աշնան քամի» խորագիրը կրող երաժշտական համերգ-երեկոն: Երգչի երկար սպասված համերգին ներկա էին Արցախի Հանրապետության մշակույթի, երիտասարդության հարցերի եւ զբոսաշրջության նախարար Սերգեյ Շահվերդյանը, երգչի ընտանիքի անդամները, Վահագ Ռաշի յուրահատուկ արվեստի սիրահարները:

Ստերմիկ մթնոլորտում ինչել են արդեն սիրված երգեր, նաեւ՝ նոր կատարումներ: Վահագ Ռաշին նվագակցել է քույրը՝ ջութակահարուհի Լիլիթ Ռուշանյանը:

Արցախում գտնվելու առիթից օգտվելով՝ «Ապառաժ»-ը գրուցել է հայտնի ու անհայտ բանաստեղծների ստեղծագործություններին յուրահատուկ ինչեղություն տվող, յուրօրինակ ձայնով, երաժշտական ճաշակ թելադրող երաժիշտի հետ:

- Վահագ, Ձեր արվեստի սիրահարների համար համերգը վաղուց սպասված էր: Շուշիի համերգից դուք ի՞նչ սպավորություններ ստացաք:

- Շատ մեծ էներգիա ստացա, Արցախ գալուց միշտ մեծ դրական էներգիա եմ ստանում: Շատ եմ կապված Արցախի հետ, քանի որ երկու տարի էլ այստեղ ծառայել եմ: Մտածում եմ առաջիկայում Ստեփանակերտում կենդանի նվագակցությամբ հանդես գալու մասին:

- Դուք նոր շունչ, կյանք եք տալիս արդեն հայտնի կամ անհայտ ստեղծագործություններին: Հետաքրքիր է, ի՞նչպես եք ստեղծագործությունների ընտրությունը կատարում:

- Հնարավոր է՝ բանաստեղծությունները կարդամ ու հոգեհարազատ բան գտնեմ բանաստեղծության մեջ, իմ համար նշեմ, որոշեմ, որ հետո երգ պիտի դառնա: Շատ երգեր, կիսատ մնացած

երաժշտություններ ունեմ գրած, որոնց համար բառեր պետք է ստեղծվեն: Մոտավոր 300-400-ի չափ կիսատ մնացած գործեր կան, որոնք մնացել են համակարգչի հիշողության մեջ: Վերջնական տեսքի բերելը կախված է նաեւ ծախսերի հետ՝ գործիքավորում, մշակում, ձայնի վոկալ: Այդ ամենը հաշվի առնելով՝ հերթով, կամաց-կամաց անում եմ:

Հայրիկիս երգերը գործիքավորելուց



հետո սկսել եմ ես երգեր գրել: Չնայած փոքր տարիքից եմ գրում երգեր, բայց հիմնական երգացանկս կազմում են հայրիկիս գրած երգերը: Եղիշե Չարենցի «Լուսամփոփի պես աղջիկ» բանաստեղծության երաժշտությունը գրել է քեռիս, «Ժամանակ» երգը՝ ընկերներիցս մեկը, մնացածը իմ հեղինակային երգերն են: Հիմնականում աշխատում եմ ընտրել հայ դասականների ստեղծագործությունները, նաեւ նոր բանաստեղծներից գործեր, որոնք ինձ դուր են գալիս: Ժամանակակից գրողներից դեռ միայն Տաթև Ոսկանյանի հետ եմ աշխատել:

- Արդյո՞ք մտահոգություն չեք ունենում, որ արդեն հայտնի ստեղծագործությունների նոր տարբերակները չեն ընկալվի ունկնդիրների կողմից:

- Մտավախություն, որպէս այդպիսին, չի եղել: Ինչ-որ չափով եղել է ռիսկային քայլ: Ես բնավորությամբ միշտ ռիսկային եմ եղել: Իսկ քննադատություններից երբեք չեմ վախեցել, ընդունել եմ, իհարկե, առողջ քննադատությունը:

- Բազմիցս նշել եք, որ Ձեր երաժշտական կայացման վրա մեծ ազդեցություն են թողել Ձեր ծնողները: Իսկ հայ երաժիշտներից ովքե՞ր են Ձեզ համար օրինակ ծառայել:

- Մանկուց, կարելի է ասել, դաստիարակվել եմ Հայկվերդյանով, Մեսչյանով, Արմեն Մովսիսյանով, դասականներից Ռուբեն Մաթեոսյանին եմ փոքր ժամանակից լսել: Ու, կարելի է ասել, որ նրանց ազդեցության շնորհիվ է, որ հայերեն եմ սիրում երգել: Եթե ռուսերեն երգեմ, կերգեմ իմ գրած բառերով: Համերգներին շատ են խնդրում երգել արտասահման

յան երգեր: Երգում եմ, բայց չեմ սիրում, քանի որ, իմ կարծիքով, երգիչը պետք է մատուցի կոնկրետ իր ձեռագիրը, իր երգը: Եթե ինչ-որ բան ես անում, երգ ես երգում, պիտի քո ոճով ներկայացնես: Միշտ փորձում եմ յուրովի ներկայացնել. թե ինչքանով է դա ստացվում, հանդիսատեսը կարող է ասել:

- Ի՞նչ ստեղծագործությունների սպասեք առաջիկայում:

- Այժմ գործիքավորման փուլում է «Բարի արագիլ»-ը: Բավական ժամանակ առաջ, երբ դեռ ոչ մեկը չէր երգել այն, պատրաստած ունեի: «Փոքրիկ տղան մի վարդ տեսավ» երգը հին երաժշտությամբ կներկայացնեմ իմ ոճի մեջ: Շուտով կներկայացնեմ «Անձրեւ» երգը, որը աշնանային երգ է: Ունեմ ռուս բանաստեղծ Անենկի բառերով գրված ռուսերեն երգ՝ «Осенний романс» է կոչվում: Կան նաեւ երկու երգեր, որոնց երաժշտությունը ես չեմ գրել, բայց ինձ շատ հարազատ մարդ է գրել: Բառերը մայրիկս է գրել: Առաջինը կոչվում է «Երգ երգի մասին»: Հետաքրքիր երգ է, թե ինչ է երգն ինձ համար: Երկրորդը «Մեր բակ» է կոչվում: Դա արդեն գործիքավորման մեջ է. ես իմ ձեռագիրը կդնեմ, եւ երգը երաժշտությամբ, բառերով պատրաստ է: Բավական շատ բան կա անելու, պետք է աշխատեմ:

- Տարբեր միջոցառումների, համերգների ժամանակ այնքան էլ հաճախ չենք տեսնում Վահագ Ռաշ երգչին. ինչո՞վ է դա պայմանավորված:

- Ճիշտն ասած, ես չեմ սիրում շատ մատուցել ինձ: Հայաստանի տարբեր ռեստորաններում, փաբերում ելույթ ունենալու բազմաթիվ առաջարկներ եմ ստանում: Բայց ես դրան կողմակից չեմ: Ճիշտ կլինի այսպիսի մտերմիկ, անմիջական միջավայրում կազմակերպել համերգ, գեղեցիկ մատուցել երգերը:

Տաթևիկ ԱՐԱՋԱՆՅԱՆ

Ադրբեջանի համար ցավոտ է Լեռնային Ղարաբաղի ներկայիս կարգավիճակն ու դրա ամրագրումը

Ադրբեջանի համար ցավոտ է Լեռնային Ղարաբաղի ներկայիս կարգավիճակն ու դրա ամրագրումը: Tert.am-ի հետ զրույցում այս մասին ասաց Լեռնային Ղարաբաղի Ազգային ժողովի փոխնախագահ Վահրամ Բալայանը՝ պատասխանելով այն հարցին, թե ի՞նչ նկատի ունեն ռուսաստանյան փորձագիտական շրջանակները, երբ ասում են, որ Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորումը կարող է լինել ցավոտ ե՛ւ Ադրբեջանի, ե՛ւ Ղարաբաղի համար:

«Ադրբեջանն ու Թուրքիան պարբերաբար խոսում են, որ չեն հանդուրժի այս տարածաշրջանում հայկական երկրորդ պետություն: Սա նորություն չէ, 18-րդ դարից սկսած թուրքական իշխանությունները այս մասին հայտարարում էին, որ չեն հանդուրժի, որ ստեղծվի հայկական երկրորդ պետականություն:

Այս թեզը մինչ օրս էլ նրանց համար ակտուալ է, հակառակ դեպքում չէին հայտարարի, որ չեն հասնի մինչեւ Ստեփանակերտ կամ Սեւանի ափ, Երեւան:

Նրանք հեռահար նման նպատակներ ունեն, բայց Ադրբեջանի համար առաջնային խնդիրը Նախիջեւանի հետ անմիջական կապ ունենալն է, որի համար ամենահարմար տարբերակը Ղարաբաղը կլանելն է: Արցախի ժողովրդի կամարտահայտությունը պետք է հաշվի առնվի: Այնպես չէ, որ դրսում պետք է որոշում կայացնեն, բերեն, փաթաթեն ժողովրդին: Իսկ ժողովուրդն իր որոշումը կայացրել է, մարդիկ «այո» են ասել պետականությանը», - ասաց Վահրամ Բալայանը:

ԼՂ ԱԺ փոխնախագահը նկատեց, որ անկախ Արցախի Յանրապետության գոյությունն է, որ իրենց համար ցավոտ է:

«Եթե Նախիկնում խոսվում էր Արցախը Ադրբեջանի կազմում ներգրավելու մասին, համատեղ պետություն ստեղծելու կամ Յայաստանի կազմում ներգրավելու մասին, ապա հիմա առաջնային է, շեշտադրվում է ժողովրդի ինքնորոշման իրավունքը: Սրա տակ ենթադրվում է պետականություն: Ժողովրդի կամարտահայտությունը դրսևորվել է այդ կերպ՝

պետականություն ունենալ: Անհար է, որ Արցախի հետագա ապագան Ադրբեջանի կազմում լինի: Ժողովրդի ընտրությունը հարգել է պետք, ժողովուրդը պատրաստ է պայքարել իր անկախության համար», - նշեց Վահրամ Բալայանը:

Իսկ թե ինչի՞ գնով պետք է ամրապնդվի Արցախի անկախությունը, ինչի՞ դիմաց Ադրբեջանը պետք է համակերպվի կարգավիճակի հետ, ԼՂ ԱԺ փոխնախագահը պատասխանեց. «Մենք բան չունենք տալու, ի՞նչ պետք է տանք, ի՞նչ կարող ենք տալ: Պատերազմի արդյունքում քարտեզը փոփոխության է ենթարկվել, հայ զինվորը ազատագրել է իր Նախիխների հողը, նրանք պատերազմ են մեզ պարտադրել, մեր վզին պատերազմ են փաթաթել ու մենք հաղթել ենք, ինչը նշանակում է, որ մենք պետք է պետականություն ունենանք»:

Նա ասաց, որ Ղարաբաղի համար էլ ցավոտ կողմեր կան՝ Արցախը կորցրել է Շահումյանը, Մարտունու տարածքներից, Յյուսիսային Արցախը:

Դիտարկմանը, թե արդյո՞ք Կատալոնիայի շուրջ տիրող իրավիճակը կարող է ազդել ղարաբաղյան հիմնահարցի կարգավորման վրա, Վահրամ Բալայանն ասաց, որ հակամարտությունները տարբեր են յուրովի:

«Իսպանիայի իշխանությունները խոսում են հանրաքվեի խախտումների մասին, մեզ չեն ասել, որ մենք որեւէ իրավական սխալ ենք թույլ տվել, որովհետեւ խորհրդային օրենքների շրջանակներում է ամեն ինչ արվել: Այնպես որ կան որոշակի տարբերություններ: Բայց ամեն դեպքում ակնհայտ է, որ կան հասարակական զարգացման օրինաչափություններ, որ մարդն ուզում է անկախ ապրել իր տարածքում, իր հայրենիքում: Գուցե այսօր ճնշեն, վաղը ճնշեն, բայց ի վերջո անկախության ձգտող փոքր պետությունները հասցնելու են դրան: Գուցե մեծ երկրները փող ունեն, զենք ունեն, բայց օր է գալիս, երբ այդ ամենը մարդու կամքի առաջ զրոյանում է, կամքը արտահայտվում է», - շեշտեց նա:

Տիգրան ԿՍՏՈՐՈՅԱՆ

Չինվորական, ով անձնուրաց մարտնչեց ու քաջի մահով ընկավ

Մի քանի օր առաջ էր: Ռոբերտ Եսայանը զանգեց ու ասաց, որ ապրիլյան ծանր օրերին քաջի մահով ընկած Արամ Առուշանյանի այրի՝ Էլլադան աշխատանքի է ընդունվել մանկական գրադարանում:

Մի պահ լռեց, ապա՝

- Լավ կլինի տեսնեք, զրույցեք ու անհրաժեշտ տեղեկություններ վերցնեք ամուսնու անցած մարտական ուղու մասին... Ինքը սպասում է ձեր զանգին...

Հանդիպումը չուղացավ:

Էլլադան, որ առաջին իսկ պահից կիրթ ու խոհեմ անձնավորության տպավորություն թողեց, շատ բան պատմեց ոչ միայն ամուսնու, այլև նրա ջոկատի տղաների՝ Ատոմի, Գարիկի, Գարեգինի, Սպարտակի, Կորյունի (վերջինս հիմա չկա) ու էլի շատերի մասին, որոնք, արդարեւ, մարտական փառավոր ուղի են անցել եւ իրենց անունները անուրանալի սխրանքով պսակել:

Պատմում էր կարոտի ու ափսոսանքի զգացումով, հուզմունքով, դառնացած հոգով: Դե իսկ երբեմն ժպիտի նման մի բան էր շողում աչքերում: Չէր թաքցնում հպարտությունը, որ պահում, փայփայում էր սրտի խորքում: Այո՛, նաեւ հպարտանում էր: Հպարտանում էր լեգենդ դարձած ամուսնու սխրագործություններով:

Պատմում էր նա, ու իմ աչքերի առջեւ ասես աննկատ գալիս կանգնում էր նա՝ հաթերքի Նիկոլայի Արամ որդին: Գալիս կանգնում էր իր մարտական կեցվածքով, կորովի հայացքով, իր շիտակությամբ, իր տոկունությամբ, մեր հաղթանակի, մեր բանակի մարտունակության նկատմամբ ունեցած անսահման հավատով:

Շատ օրեր են անցել այն օրից, 2016-ի ապրիլի 26-ից, որը ճակատագրական եղավ անվեհեր մարտիկի համար: Բայց այսօր էլ նա կա, ապրում է մեզ հետ, մեր կողքին: Նրա անունը սիրով ու հարգանքով են արտասանում ոչ միայն ծննդավայրում, այլև շրջանում, ողջ Ղարաբաղում: Ի դեպ, վերջերս հայրենի գյուղի հիմնական դպրոցի ռազմահայրենասիրական կաթինետը կոչել են նրա անունով:

Արժանի որոշում, որը, ինչ խոսք, մեծապես կնպաստի սաների, եւ առավել՝ բարձր դասարանների պատանիների ու աղջիկների մեջ հերոսի նկատմամբ սեր ու հարգանք արթնացնում նրա հիշատա-

կը միշտ անմոռաց պահելու վե՛տ ու պատվաբեր գործին: Թերեւս զարմանալի չէ, որ աշակերտները մի անբացատրելի երկյուղածությամբ են բացում կաթինետի դուռը: Բացում են սրտի տրոփով, հուզմունքով, ցավի ու ափսոսանքի տխուր զգացումով: Հիշեցնեք, որ Արամի ծվեն-ծվեն արված մարմնի մասունքները ամփոփված են դպրոցից փող-ինչ հեռվում գտնվող մի բլրակի վրա, որտեղ հանգչում են 90-ականներին ու նաեւ հետո հայրենի հողի համար նահատակված հաթերքի տղաները: Արամի դին հանգչում է 58 կտրիճների կողքին, նրանց սրբացած շարքում: Ինքը 59-րդն է: Ի՞նչ արած: Նրան էլ այս ճակատագիրն է վիճակվել: Դառն ու դաժան ճակատագիրը: Այժմ դառնանք կենսագրականին ու մեջբերենք առանձին տողեր, ուշագրավ պարբերություններ:

Ծնվել է 1972-ի հունվարի 24-ին, Մարտակերտի շրջանի Հաթերք գյուղում: Ուսումնառության տարիներին առանձնակի սեր ու հետաքրքրություն է ցուցաբերել բնագիտական առարկաների, մասնավորապես՝ մաթեմատիկայի եւ ֆիզիկայի նկատմամբ: Դպրոցն ավարտել է բարձր նիշերով, գոհացրել արդյունքներով: 1990-ին ընդունվել է Երեւանի պոլիտեխնիկական ինստիտուտի լեռնամետալուրգիայի բաժինը, բայց չի ավարտել: Ուսումը կիսատ է թողել: 91-ի մայիսին անդամագրվել է Հաթերքի՝ կամաց-կամաց ուժ հավաքող, հզորացող, նենգ ու դավադիր թշնամու «հերն անիծող» ինքնապաշտպանական ջոկատին:

Զսանը Նոր բոլորած հայորդու աչքի առաջ տներ, բնակավայրեր էին ավերվում, վառվում, անմեղ մարդիկ զոհվում, վիրավորվում, խեղվում, ու նրա սիրտը դառնորեն կսկծում էր զինակից ընկերների կորստյան ցավից: 92-ի սեպտեմբերի մեկից ծառայել է Գասպարյանի (Գրադ ժորա) հետախուզական ստորաբաժնում՝ որպես մարտկոցի հրամանատար: Մասնակցել է թշնամու կենդանի ուժի եւ ռազմական տեխնիկայի ոչնչացման մարտավարությանը, Մարտակերտի շրջանում մղված արյունալի գործողություններին, Զարվաճառի կրակակետերի վերացման ահավոր դեպքերին: Ու կրակների բոցերի, երկինք բարձրացող ծխի ու մրի մեջ աճել, առաջ է գնացել, շարքայինից դարձել փոխգնդապետ: Իսկական

հայրենասերին վայել խիզախությամբ:

Միշտ աչքի է ընկել պարտաճանաչությամբ, բարձր կարգապահությամբ, ենթակաների նկատմամբ ունեցած խստապահանջ, միաժամանակ՝ ուշադիր, ազնիվ վերաբերմունքով: Տիրապետում էր զենքի բոլոր տեսակներին: Արցախյան պատերազմում ունեցել է իր անգնահատելի, անուրանալի ներկայությունը:

Կիսատ թողած ուսումը շարունակել է Արցախի համալսարանում: 97-ին ավարտել է բուհի «Արդյունաբերական եւ քաղաքացիական շինարարություն» ֆակուլտետը: 13-ի ապրիլի 2-ին անցել է զինվորական թոշակի, սակայն հոգով բանակում ծառայող, առաջնագծում դիրքերը պահող տղաների հետ էր իր խորհուրդներով, օգնում, աջակցում էր նրանց:

Հիշենք, որ 1992-2013 թթ. զբաղեցրել է պատասխանատու մի շարք պաշտոններ (Մարտկոցի հրամանատար՝ Տոնաշենում, ներքին Հոռաթաղի հրետանու պետ՝ Մատաղիսում, դիվիզիայի հրամանատար՝ Եղնիկների 7-րդ եւ Մարտակերտի 5-րդ պաշտպանականում, գնդի ՂԱԳ-ի տեղակալ՝ Սոխավենդում...), նրա անմիջական մասնակցությամբ ու գլխավորությամբ է կազմավորվել «Եղնիկների» գնդի հրետանին:

2016թ. ապրիլի 2-ին Արամ Առուշանյանը, որպես փորձառու հրետանավոր, դարձյալ հայտնվում է առաջնագծում: Նա N զորամասի առաջին հրաձգային գումարտակի հրամանատարի տեղակալն էր: Մի զինվորական, ով անձնուրաց մարտնչեց ու քաջի մահով ընկավ ապրիլի 26-ին, Մատաղիսի համար ծավալված թեժ մարտերից մեկում: Ընկավ, որ հայ մանուկը երբեք չտեսնի թուրքին. իրենց տան բակում ու շրջապատում, ամենուր լինի անհոգ մանկություն, խաղաղություն:

Ուրախությամբ ու գոհունակությամբ ասենք, որ ԱՅ եւ ՀՀ կառավարությունների կողմից Արամ Առուշանյանի անձնուրաց ծառայությունը գնահատվել է ըստ արժանվույն: Նա բազմիցս արժանացել է



բարձր պարգևների, պատվոգրերի, շնորհակալագրերի, մեդալների ու շքանշանի: Այդ մեդալների ու պարգևների մեջ կրակված սիրտ կա ու ազնիվ ոգի, բոցավառ միտք կա եւ ուժգին հարված, կա անվրեպ սլացք, վսեմ նպատակ, ու նաեւ սեր կա, նվիրական կարոտ հայրենի եզերքի հանդեպ, պարտք կա սրբազան, պարտականություն, հայոց զինվորին հատուկ անձնուրացություն ու բարձր, բարձր հայրենասիրություն...

Անշուշտ, շատ են նրա կյանքի փայլուն էջերը, նրա կատարած սխրանքները, նրա անվան հետ կապված հուշերն ու հիշողությունները: Չմոռանանք ասել, որ ունի խելոք ու ուշիմ չորս զավակներ՝ երկու տղա եւ երկու աղջիկ, որոնք, ճիշտ է, ծանր են տանում հոր կորուստը ու սրտի խորքում ցավի ու ափսոսանքի խոր զգացում են ապրում, բայց նաեւ անթաքույց հպարտանում-պարծենում են նրանով եւ ամենուր սրբորեն են պահում հուշն ու հիշատակը նրա:

Դե, իսկ կինը՝ Էլլադան... Նա համեստ ու պարկեշտ մի հայուհի է, որն իր համեստ աշխատանքով, կիրթ ու բարի զավակներով, իր նամուս-ղեյրաթով վայելում է կոլեկտիվի, բոլորի սերն ու հարգանքը, հավատն ու վստահությունը:

Միքայել ԲԱԼՅԱՆ

Թատրոնի հորիզոնը ուրվագծողները

Տրամադրություն փոխող, կիրթ ու տաղանդավոր՝ այսպիսին են Ստեփանակերտի նոր բնակիչները՝ Գագիկը, Յունոնան ու Աննան։ Ավարտելով Երեւանի Յրաջա Ղափլանյանի անվան դրամատիկական թատրոնը՝ երիտասարդներն ընդունել են Ստեփանակերտի Վահրամ Փափազյանի անվան պետական դրամատիկական թատրոնում աշխատելու առաջարկը՝ մտածողության ու գաղափարների լայն կտավը փոքրիկ բեմում ապրեցնելու համար։

Թատրոնը նման է գունապնակի, պետք է անընդ-հատ նոր գույներով հարստացնել

Սերը դեպի արվեստը Աննա Ավետիսյանը ժառանգաբար է ստացել հորից։ Դպրոցական տարիներին Յրազդանում հաճախում էր թատերական խմբակ, հանդես էր եկել մի քանի ներկայացումներում։ Դպրոցն ավարտելուց հետո էլ ընդունվել է Երեւանի Յրաջա Ղափլանյանի անվան դրամատիկական թատրոնի ռեժիսուրայի ֆակուլտետ։

«Սկսում ես ապրել թատրոնով, եւ ընդունում ես այն՝ որպես քո երկրորդ տուն, կոլեկտիվին էլ՝ որպես երկրորդ ընտանիք,- ասում է Աննան եւ շարունակում,- մինչեւ բեմ դուրս գալը ծայրահեղ զգացմունքների խառնաշփոթ է լինում՝ վախ, սարսափ, տագնապ, սակայն թատրոնը ֆանտաստիկ երեւոյթ է, քանի որ՝ երբ դուրս ես գալիս բեմ, հենց այդ պահին այդ զգացողությունները վերանում են ու սկսում ես վայելել բեմի վրա անցկացրած րոպեները, մոռանում ես քո եսը, քո անձը եւ ապրում ես այդ իրադրությամբ, այդ ներկայացումով։ Կենդանի արվեստ է թատրոնը»։

Արվեստի այս ճյուղում հաջողելու Աննայի բանաձեւը հետեւյալն է՝ բնությունից տրված որոշակի տաղանդ, գումարած աշխատասիրություն։

«Թատրոնը նման է գունապնակի, պետք է անընդ-հատ նոր գույներով հարստացնել», - շեշտում է Աննան։

Թեեւ բուհն ավարտելուց հետո Երեւանում աշխատանքի մի քանի առաջարկ է ստացել, սակայն «արմատների» գործոնը մեծ դեր խաղաց Արցախում աշխատելու որոշման հարցում։

«Վերջ ի վերջո Չանգեզուրի մարդ եմ, արյունս ձգել



է», - ժպտում է գրուցակիցս։

Թեեւ Արցախում թատրոնի շենքի բացակայությունը մեծ խնդիրների առաջ է կանգնեցնում դերասաններին եւ ռեժիսորներին, Աննան վստահ է, որ իր գործում կարելուք ստեղծագործական թիմն է՝ ում հետ աշխատում ես։

«Եթե կա ստեղծագործական պրոցես, աճը եւ զարգացումն ապահովված են», - վստահեցնում է երիտասարդ ռեժիսորը։

Թատրոնը տաճար է, բեմը՝ խորան

«Դարաբաղ գալն իմ կյանքի կարելուք եւ ճակատագրական որոշումներից է եղել։ Դա թիմային որոշում էր,

որը մենք ընդունել ենք հեռուն նայելով, քանզի արվեստում շատ կարելուք է ունենալ լավ ստեղծագործական թիմ, որի հետ հաճելի է աշխատել,- պատմում է Յունոնա Մալենկոն եւ շարունակում,- իրականում ստեղծագործող եւ ինքնակրթվող մարդը, էական չէ Դարաբաղում է, Երեւանում, թե Գյումրիում, ունենալու է որոշակի զարգացում, մանավանդ թատրոնում, քանզի թատրոնի ասելիքները շատ են, եւ թատրոնը շարժվում է ժամանակին զուգընթաց»։

Յունոնա Մալենկոյի ընտանիքում առհասարակ արվեստի գործիչներ չկան։ Ինքն ու քույրն են ընտրել ար-



վեստի ոլորտը եւ ընդունվել դրամատիկական թատրոնի ռեժիսուրա ֆակուլտետ։ Թատրոնը համարում է տաճար, բեմը՝ խորանին համագոր տեղ, որտեղ մտնում է մաքուր սրտով, ինչպես եկեղեցի։

«Թատրոնն ունի մերկացնելու հատկություն, եւ ամեն անգամ նոր կերպար կերպարանավորելիս ունենում եմ մեծ պատասխանատվության եւ վախի զգացում, որովհետեւ մտածում եմ, որ ցանկացած կերպար ինձնից մեծ է։ Ամեն կերպարի ծնունդը համեմատում եմ հղիության ընթացքի հետ, երբ մայրը 9 ամիս սպասում է իր երեխայի լույս աշխարհ գալուն, ծնվելու պահին զգում երջանկություն, հրաշքի զգացողություն եւ տառապանք՝ ծայրահեղ զգացողություններ, որոնք ինչպես մայրը, այնպես էլ դերասանն է ունենում նոր կերպար կերպարանավորելիս», - պատմում է Յ.Մալենկոն։

«Փոխվո՞ւմ է արդյոք դերասանը դերախաղերի արդյունքում» հարցի շուրջ՝ Յունոնան կարծում է, որ միեւնույն է երբեք մարդն իր անձը չի կորցնում, երբ կերպարավորում է ինչ-որ մի կերպար։

«Ուղղակի դու քո ներսում մի ծիլ ես դնում մեկ այլ մարդու, որն ունի իր մտածողությունը, իր շարժումները, հոգեվիճակը եւ աշխարհընկալումը, եւ այդ ծիլը զարգացնում ու աճեցնում ես բեմի վրա, որից հետո այդ ծիլը, ինչպես խոտը, պոկում ու մի կողմ ես դնում», - ասում է երիտասարդ արվեստագետը։

Յունոնան ապրում է ներկայով եւ կյանքը համարում է պահ, որն ապրում է պատասխանատվությամբ՝ ապագայի մասին մտածելով, բայց միշտ մտքում ունենալով Մ. Բուլգակովի խոսքերը՝ А он не знает, что Анышка уже разлука масло / Եվ նա չգիտեր, որ Անուշկան արդեն թափել է յուղը/։

Թատրոնի նոր փառքը յուրովի կլինի ու ավելի հաշող

Գագիկ Յարությունյանին պատահականությունն է հասցրել թատրոն։ Վայքում սովորելու տարիներին կերպարանավորել է «Շմեցուցիչ հարված» պիեսի գլխավոր հերոսի՝ Վանիկի կերպարը։ Վայքի փոքրիկ բեմը ամուր թելերով կապեց Գագիկին թատրոնի հետ։

«Թատրոնը հասունացնելու ուժ ունի իր մեջ. ամեն դերի հետ մեծանում ես։ Թատրոնում դու տեսնում ես։ Եվ եթե ուրիշ երկիր գնալու համար գումար չունես, կարող ես գնալ թատրոն՝ ներկայացման, ու շատ ավե-

լի կզարգանաս։ Յետաքրքիր ու աներեւոյթ է թատրոնը», - ասում է Գ. Յարությունյանը։


Վստահ է, որ թատրոնի նոր փառքը յուրովի կլինի ու ավելի հաջող, որովհետեւ այսօր Արցախում կան երիտասարդներ, ովքեր չափազանց անկեղծ են բեմում, ինչն էլ թատրոնի ապագա հաջողությունների գրավականն է։

«Փորձի արդյունքում լուցկի վառել կարելի է սովորեցնել նույնիսկ հավին։ Ընդհանրապես ամեն ինչ աշխատասիրություն է պահանջում։ Պետք է շատ աշխատել եւ ամեն ինչ լավ կլինի», - ասում է երիտասարդը։

Ի տարբերություն Յունոնայի՝ Գագիկը վերցնում է կերպարների բնավորության այն հաճելի գծերը, որոնք կարող են լավ ազդել իր բնավորության վրա։ Չգույշ է միայն մեկ հարցում՝ չդադարի հուզվել բեմ դուրս գալուց առաջ, քանզի դերասանը դադարում է դերասան լինելուց այն ժամանակ, երբ կորցնում է այդ վախը։

Գագիկը դժվարանում է պատասխանել «ինչու է որոշել գալ Արցախ» հարցին։ Չգիտի։ Բայց՝ չի փոշմանել։ Մի քանի ամիս Ստեփանակերտի Վահրամ Փափազյանի անվան պետական դրամատիկական թատրոնում աշխատելուց հետո Գագիկը զինվորական ծառայության է անցել Արցախում։

«Թատրոնում պաշտպանում էի մշակույթը, առաջնագծում՝ հայրենիքը։ Թատրոնն ու բանակը, կարծում եմ, նույն բանն են։ Ուրախ եմ, որ զինվոր լինելու զգացողությունները ապրելու եմ։ Վստահ եմ՝ որպես դերա-



սան հետագայում կօգտագործեմ այդ ապրումները», - ասում է Գագիկ Յարությունյանը։

Յ.Գ. Տարիներ շարունակ Արցախը համարվում էր մշակութային գործիչների զարգացման համար հեռանկար չունեցող վայր։ Գուցեեւ այդպես է, քանզի Վահրամ Փափազյանի անվան պետական դրամատիկական թատրոնի շենքի վերանորոգման նախագիծն այդպես էլ մնացել է թղթի վրա, իսկ թատրոնի աշխատակազմը հյուրի կարգավիճակում գործունեություն է ծավալում Արցախի մշակույթի եւ երիտասարդության պալատի շենքում։ Գուցեեւ դերասանների աշխատավարձը քիչ է եւ նրանք չունեն հազուստների մեծ ընտրություն, սակայն Երեւանից Արցախ տեղափոխված Յունոնան, Աննան ու Գագիկը բացահայտում են եւս մի ճշմարտություն՝ ստեղծագործող մարդու համար կարելուք չէ, թե որ քաղաքում եւ ինչ մեծության բեմում են ստեղծագործում, կարելուք ցանկություն, համարձակություն ու ընդունած որոշմանը տեր կանգնելն է։

Արցախյան թատրոնի երբեմնի փառքի մասին ՇԱՏԵՐՆ են խոսում, գալիք եւ ապագա փառքի մասին՝ ԶՉԵՐԸ։ Յունոնան, Աննան ու Գագիկը փոքրամասնության շարքին են պատկանում՝ հավատալով, որ մի օր թատրոնը կունենա իր սեփական դահլիճը եւ բոլոր անհարմարությունները կման ետեւում։

Լուսինե ԹԵՎՈՍՅԱՆ

Ոգեղեն Հայրենիք

20-րդ դարում, պայմանավորված ազգային պատմության քաղաքական ընթացքով, ավելի ուժգին էր խփում հայ գրականության հայրենասիրական ջիղը: Ազգային ճակատագրի ողբերգական հարցադրումները դարձան դարի գրականության, հատկապես բանաստեղծության առանցքը, գեղարվեստի հոգեբանության օրինաչափությունը: Գրականության առաջնային դերը նշանավորվեց գեղարվեստի սահմանագծում պատմության հոգեւոր արձանագրումով. գրական ժամանակի զարկերակը խփում էր պատմական ժամանակի իրողություններին համընթաց: Ազգային ճակատագրի դրաման դարձավ դարի գրական հանձարի ներանձնական դրաման՝ պատմաքաղաքական ներթափանցումներով եւ գնահատումներով:

Արեւելահայ եւ արեւմտահայ ազգային - գրական ընթացքը նպատակամիտված էր ազատ, անկախ, միացյալ հայրենիքի վերստեղծման գաղափարին: Գրական անհա-

տականությունները, հոգեւոր կերտվածքի եւ ստեղծագործական ներքին առանձնահատկություններով հանդերձ, ամբողջաբանում էին գաղափարական սկզբունքների միասնության մեջ: Ազատասիրական մաքառման ոգին, ազգային գոյության անկումներն ու վերելքները, ողբերգություններն ու կորուստները, վերածնության հույսը, ազգային տեսակի պահպանման խնդիրը հայրենասիրական գրականության դիմագիծն են եղել ամբողջ 20-րդ դարում: Ցեղասպանությունից եւ պատմական հայրենիքի կորուստից հետո գրականությունը դարձավ կորուսյալ հայրենիքին փոխարինող հոգեւոր հայրենիք, ազգային հիշողությունը պահպանելու եւ ժառանգելու, ազգային հավաքական կենսագոյության, միացյալ հայրենիքի գաղափարակիր ուժ: Սակայն դարի հայրենասիրական գրականության ճանապարհը նաեւ հավատաքնության ճանապարհ էր, հալածանքների, ձերբակալությունների, նա-

հատականության ճանապարհ, որին զոհ գնաց գրական հանձարի մի քանի սերունդ:

Հայաստանի առաջին հանրապետության 100-ամյակին ընդառաջ «Ոգեղեն հայրենիք» հոդվածաշարում վերաքննվելու է 20-րդ դարի հայ գրականության մի մասը՝ գրական դիմանկարներով, գրապատմական հարցերով, գաղափարական արժեքներով: Անհրաժեշտ է գրական երեւոյթները վերագնահատել ըստ էության, վերագտնել դարի հայրենասիրական գրականության ներքին զարկերակը, հասու լինել գրականության ընդերքում պահված ճշմարտություններին, նորահայտ վավերագրերով վերհանել նախընթաց տարիների գրականագիտության պատմությունից վրիպած էջեր, նորովի ընկալել 20-րդ դարի հայ հայրենասիրական գեղարվեստական մտքի ամբողջ պատմությունը:

«ԱՊՐԱՍԺ»

«Ցեղին սիրտը» եւ ցեղակրոնությունը



Այս կամ այն ժողովրդի ուժակշիռն ու դիմագիծը պատմականորեն ձեւավորող նախադրյալներ են ցեղային նկարագիրն ու գաղափարաբանությունը: 20-րդ դարասկզբի արեւմտահայ պոետիայում բարձրանում է ցեղային ինքնագիտակցության խնդիրը, ցեղային գլխավոր պաշտամունքների վերարմատավորման մտայնությունը: Նախաքրիստոնեական արմատներին գաղափարական դարձի հակումը պայմանավորված էր նախ եւ առաջ ազգային ողբերգությունների քաղաքական ընթացքով: Վարուժանի պոեզիան՝ «Ցեղին սիրտը» հավաքական պաշտամունքի խորհրդանշով, դարձավ գաղափարական այդ մտայնության կենտրոնաձիգ առանցքը:

«Ցեղին սիրտը» սոսկ ցեղային հավաքական զգացմունք չի ուղենշում, այլեւ արմատներին դարձ խորհրդանշող արիական պաշտամունք: 1908թ. Ա. Չոպանյանին հղած մի նամակում Վարուժանը խոստովանում է. «Յեթանոս կյանքը օրեօր զիս կը գրավէ. եթե այսօր կարելի ըլլար՝ կրոնքս կը փոխեի եւ սիրով կ'ընդգրկեի բանաստեղծական հեթանոսությունը: Ե: Ցեղային ոգին՝ արիական իմաստասիրությամբ, դառնում է Վարուժանի ստեղծագործության՝ ներքին ենթաշերտից բխող աշխարհայացքը:

1932թ. Սոֆիայում լույս տեսան ցեղային շարժում սկզբնավորող Գ. Նժդեհի «Ցեղի ոգու շարժը» եւ «Ցեղակրոնությունն իբրեւ հաղթանակի գորույթ» որքան գաղափարական, նույնքան էլ գործնական տեսությունները: Շարժման գաղափարաբանության վերաբերյալ 1933թ. Բոստոնում Նժդեհը հռչակում է «Ցեղային արթնություն» խորագրով գաղափարախոսությունը՝ սկիզբ դնելով Ցեղակրոն Ուխտերին: Մտավոր-նազմական հանձարի գաղափարա-կազմակերպական առաջնորդությամբ Ցեղակրոն շարժումը միանգամից հզորանում է ԱՄՆ-ում եւ

Բուլղարիայում՝ համախմբելով գաղութահայ բազմահազար խանդավառ երիտասարդների: Ցեղակրոնության բարոյականով սփյուռքահայությանը սպառնալիքներ եւ հավաքական ուժ դարձնելու Նժդեհի գաղափարական շարժումը նշանակալի երեւոյթ էր ազգային կյանքում եւ պատմականորեն իր նախահիմքերն ուներ արդեն 20-րդ դարասկզբի արեւմտահայ, մասնավորապես Վարուժանի եւ Սիամանթոյի պոեզիայի գաղափարաբանության մեջ: Ռազմի եւ բանաստեղծության հանձարները անկախ իրարից համընդհանրանում էին ցեղային հավատամքով. ժողովրդին ցեղորեն վերադաստիարակելու գաղափարը ազգային կեցության գաղափարաբանություն էր այլեւս:

Ցեղային արիական վարքի, ստեղծագործ երեակայության տիպական պատկեր է հայոց դիցաբանությունը՝ խորհրդանշիչ աստվածություններով: Մեր տոհմիկ բանահյուսությունը եւս այլ բան չէ, քան ցեղի մտաբարոյական աշխարհի արտապատկերը: Նախաքրիստոնյա հայության հոգեգիծը պատմականորեն ձեւավորած հեթանոս իմաստասիրության սկզբունքներից արիապաշտությունն ու սպառնալիքությունը նրան բարձրացրել են աշխարհակալ ցեղի գորության: Աստվածների՝ որպէս գերբնական ուժերի առանձնացումով հանդերձ՝ ցեղային հանձարը նրանց ընդհանրացրել-միավորել է մի առաքնությամբ՝ արիության հատկանիշով օժտելով բոլոր աստվածներին ու աստվածուհիներին: Հատկանշական է, որ աշխարհը կառավարող գերագույն ուժը նախնական իմաստությունը համարել է ռազմի եւ արիության ուժը: «Երեւակայում եւ օրինում եմ քաջությունը հեթանոս հայի, որպէս տղամարդու բարձր հատկություն,- գրում է Նժդեհը: - Նախաքրիստոնեական հայության մոտ այն աստիճան զարգացած էին քաջությունն ու իր պաշտամունքը, որ Վահագն արքան ժողովրդի կողմից արձանացած է հեթանոս երգերի մեջ, որպէս գերբնական ծնունդ «երկնի, երկրի եւ ծիրանի ծովի»: Խոյանքներով բարձրացող ցեղի ոգին Վահագնն էր՝ իր վիշապաքաղ վարքով: Աստվածներին վերապահված վարքը ցեղային վարքն էր, իսկ աստվածները ցեղի կերտած գաղափարատիպերն էին: Երիտոնեությունը պատմականորեն վերափոխեց հայության հոգեկառուցվածքն ու մտահայեցողությունը. Երիտոնի ճակատագիրը մի ներքին օրինաչափությամբ դարձավ մեր ժողովրդի ազգային ճակատագիրը, որ անընդհատ խաչվել ու վերածնվել է տանկյորթարյա խաչապաշտ ճանապարհին: «Վահագնի հետ պիտի խոսեսցես հիմա - աստվածը հին արիական հայության,- առաջադրում է Նժդեհը: - Սի նոր գիրք պիտի դրվի մեր ժողովրդի ձեռքը- Ավետարանը արիների: Արիություն- այս պիտ

լինի մեր սերունդների կոչումը, քանզի այդ բարձր հատկությունն է փրկում ժողովուրդները ֆիզիկական եւ բարոյական անկումներից»:

Յեթանոս դարերի գաղափարաբանության եւ պատմության վերաիմաստավորումն ու վերարժեւորումը խտացված են Վարուժանի «Յեթանոս երգեր» ժողովածուում (1912): «Ցեղին սիրտը» շարքի հեթանոսապաշտությունը այստեղ կոնկրետանում է, միաժամանակ ընդարձակում իր գեղագիտական ընդգրկումները՝ ցեղային ոգին մարմնավորելով համապատկերային կարգով: Ուղենշային է բնաբանը. «Ես կ'երգեմ Գինին- Բագիններուն ծիծաղը եւ խորաններուն արյունը: Դարերու Կյանքը կ'երգեմ, հանուն հաճույքի եւ տառապանքի գեղեցկության»: Ուժի եւ գեղեցկության պատկառանքը Վարուժանի պոեզիայում գերզգացված պաշտամուն-



քից գեղագիտական հստակ կողմնորոշում էր կանխագծում: 1908թ. Ա. Չոպանյանին գրում է. «Ոչ միայն մեր, այլեւ ամբողջ մարդկության ոյուցագնական դարերուն «nostalgie»-ն ունեւ: Ե՞րբ պիտի դառնա հեթանոսությունը եւ հին հաղթությունները, զոր վաստակելու համար հերոսներ պետք էին՝ այլ ո՞չ դիվանագիտություն»: Շարունակության մեջ Վարուժանը նշում է, թե «Ահաքին հեղեղ մը կայ ներսս, որ մինչ ցարդ հայրենիքի դիակներով թմբկած էր: Լարերս փոխելու վրա եմ: Ձեր աշխատակից ջուրմերուն հետ ես ալ պիտի գամ «Անահիտի» բազմին վրա զոհ բերելու՝ սիրտս»: Ինքնագոհաբերության հեռապատկերն առկա է նաեւ «Յեթանոս երգեր» բանաստեղծական մեխյանը բացող «Գեղեցկության արձանին» քերթվածքում. «Թե հարկ ըլլա զոհ մը ընել քեզ պարգէս, /Բագինիդ ե՛ս պիտի ուզեմ մորթը վիլ...»: «Յեթանոս երգեր» գիրքը կրքոտ քննադատությունների տեղից տվեց արեւմտահայ գրական հատվածում: Կ.

Պոլսում 1913թ. կազմակերպված գրական ասուլիսների նյութերը հրատարակվեցին առանձին գրքով: Վարուժանի պերճաշուք արվեստի բարձր գնահատումներին զուգահեռ հրատարակվեցին նաեւ հարձակողական բնույթի սուր գրախոսություններ: Հայ կաթողիկե պատրիարքարանի շաբաթաթերթի հարվածներին ի պատասխան՝ ուշագրավ էր Ե. Օսյանի «Ռոտեն կգայթակղի» պամֆլետը. «Եթե Դ. Վարուժան իր նուռ բաժակը փոխանակ դեպի Անահիտի ծիծերը բարձրացնելու, Սուրբ Մարիամին ծիծերուն բարձրացնել, թերեւս «Կաթողիկ» Արձագանքի» հոդվածագիրը առաջարկեր այդ տողերը եկեղեցիներուն մեջ կարդալու, ինչպէս երգ գրողցը, որուն մեջ ալ փառաբանված ծիծեր կան»: Երիտոնեական առաքնության դիտակետից հեթանոսամբեր գնահատումներ հնչեցին նաեւ արեւելահայ որոշ քննադատների կողմից: Արեւմտահայ գրական կյանքում սկզբնավորված հեթանոսական գաղափարաքաղաքականության շարժման արժեքները աստիճանաբար բարձրանում էր՝ հրապարակում ունենալով ոչ միայն Վարուժանի «Յեթանոս երգեր»-ը, այլեւ Շանթի «Հին աստվածները»: Ամենայն հավանականությամբ, Վարուժանի սկզբնավորած հեթանոսական գաղափարաբանության արգասիք էին նաեւ 1913-ին արեւմտահայ հոգեւոր-մշակութային կյանքում կազմակերպված նավասարդյան տոները: «Նոր Արշալույսի» նավասարդյան կերտման սկզբունքով, հանուն «Ույժին, Գեղին, Սերին, Սերմին», Վարուժանը ձոնեցրում է. «Հանձարդ Հայկյան, Նավասարդյան սա տոներուն Արեւափառ»՝ Ա՛լ վերածնել փլատակներեն, եւ փառագոյ Քընարըդ առ: Հանո՛ւն Ույժին, հանո՛ւն Գեղին, մըտի՛ր մեխյանն Աստվածներուն. Տա՛հը ձեռքիդ՝ բագնե բագին համասըմփռե՛ Զուր ու արյուն...»:

Ցեղի կերպն ու դիմագիծը վերագտնելու, ցեղային ոգուն հաղորդակցվելու, ինքնատեսությամբ ցեղորեն գործնալու խնդիրն է գրականությանը առաջադրում ցեղակրոնությունը եւս՝ ազգային զարգացման գրական ընթացքը նախանշելով ցեղայնացումից համամարդկայնացում. «Անարժեք է գրականությունը - «ազգի առաջապահը» չէ նա - եթե ցեղի ոգու ինքնարտահայտությունը չէ, եթե նրա մեջ ցեղի ոգին չի ճառագայթում: Եթե մեծ թեւաբախումներ ունի ժողովուրդը, ասել է՝ ցեղաշունչ է նրա գրականությունը, դա նշան է, որ նրա մեջ ցեղն է գործում»:

Շարունակությունը՝ հաջորդ

համարում:

Հոդվածի ամբողջական տարբերակը տես «Ապառաժ»-ի էլեկտրոնային կայքէջում:

Նարինե Հովհաննիսյան, ք.գ.թ., դոցենտ

«Ապառաժ»-ը 100 տարի առաջ եւ այսօր

Հաշտութեան նախագծեր

Անգլիական բանտարական կուսակցութիւնը մի յիշատակագիր է ներկայացրել խաղաղութեան պայմանների մասին Լոնդոնում օգոստոսի 21-ին պատգամաւորական ժողովին, որը առաքելութիւն ունի քննելու եւ մշակելու Ստոկհոլմեան սոցիալիստական կոնֆերանսի խաղաղութեան գլխաւոր պայմանները:

Այդ յիշատակագիրը, ինչպէս հաղորդում է «Dail Tel...», պահանջ է դնում, իբրեւ խաղաղութեան եւ հաշտութեան գլխաւոր պայման, ազգերի լիզայի անյապաղ գումարումը, որին պետք է յարւեն ոչ միայն աշխարհի պատերազմող, այլ եւ խաղաղ պետութիւնները: Լիզայում պետք է աթոռակալէ գերագոյն ինտերնացիոնալ դատարանը: Պետք է հիմնւեն միջնորդ ինստիտուտներ՝ վիճողական խնդիրները քննելու համար պետք է սահմանվի նոյնպէս ինտերնացիոնալ օրէնսդիր իշխանութիւն:

Կոնֆերանսը բողոքելու է պատերազմը շարունակելու դէմ մինչեւ այն աստիճան, երբ որեւէ պետութիւն հնարավորութիւն կստանայ պատերազմական անբնական տուգանքի հարց դնելու: Կոնֆերանսը պետք է յայտնի, որ խաղաղութիւն կնքելու առաջին պայմանը լինելու է գերման կառավարութիւնից աներաժ Բելգիայի վերստեղծումը, նրա ոտնահարած իրաւունքի վերադարձը, որ Գերմանիան պետք է հատուցանէ

նրա նիւթական վնասը եւ երաշխաւորէ այդ երկրի կատարեալ անկախութիւնը, իրաւունք արտօնելով Բելգիական ցեղին որոշելու ինքնին իր ապագայ քաղաքական կեանքը բոլոր հարցերում: Կոնֆերանսը պետք է պահանջի Սերբիայի եւ Սոնտենեգրոյի վերականգնումը եւ ցոյց տայ, թէ այստեղ ինչ հարցեր են ծագում այլ եւ այլ ազգերի բախտի վերաբերմամբ. այդ հարցերը պետք է լուծւեն բալկանեան ազգերի ներկայացուցիչների առանձին կոնֆերանսում կամ հեղինակավորված մի ինտերնացիոնալ յանձնաժողովում, որոնք պետք է ձեռնարկեն ի միջի այլոց, նաեւ բալկանեան դաշնակցութեան կազմակերպութեանը:

Այնուհետեւ յիշատակագիրը խօսում է մինչեւ այսօր այնքան հարստահարութեան եւ հալածանքի առարկայ եղած Էլզաս-Լոթարինգիայի մասին, որ այդ գերած երկիրը հնարավորութիւն պետք է ստանայ ֆրանսիական հանրապետութեան կցւելու եւ իր փայփայած, բազմամեայ բաղձանքին արժանանալու: Համակրանք պետք է հայտնւի իտալական երկրի նոր սպասւած հողերի մասին եւ անհրաժեշտ է երաշխաւորել իտալական շահերը Ադրիատիկ եւ Էգեյան ջրերում: Պետք է պահանջէ հրեական իրաւահաւասարութիւնը բոլոր երկրներում եւ յույս հայտնէ, որ Պաղեստինը ազատի տաճկա-



կան լծից եւ վերածի հրեական ազատ թագաւորութեան: Հայաստանը, Միջագետքը եւ Արաքստանը չպետք է թողնւեն տաճիկ բռնապետութեան ներքոյ. պետք է բարենորոգւեն այնպիսի եղանակով, ինչպէս Աֆրիկայի գաղութներն են, եւ պետք է կառավարւեն ազգերի լիզայից հաստատված յանձնաժողով:

Պոլիս, ինչպէս այդ պահանջում է համաշխարհային խաղաղութիւնը, պետք է յայտարարի իբրեւ ազատ նաւահանգիստ: Եւրոպական պետութիւնների Աֆրիկայում ունեցած գաղութները, որոնց թւում է Լիբերիան, պետք է վերածւեն անկախ, չեզոք նահանգների եւ կառավարւեն լիզայից կարգւած յանձնաժողովով:

Յիշատակագիրը վերաքննում է նաեւ լեհական հարցը, լիազորելով լեհական ազգին վճռելու այն, համաձայն իր ցան-

կութեան եւ մտնելու իբրեւ ատոնում միութիւն մի ուրիշ թագաւորութեան մէջ կամ դառնալով միանգամայն անկախ պետութիւն:

Յիշատակագիրը վերջանում է՝ յոյս յայտնելով, որ սոցիալիստական ինտերնացիոնալի գումարումը լաւագոյն գրաւականը կլինի հաշտութեան եւ կոչը բոլոր կռող երկրների յեղափոխական եւ բանտարական կուսակցութիւններին՝ գործելու հայացքների շուտափոյթ փոխանակութեան շուրջը, որով հետեւ փոխադարձ համաձայնութիւնը միայն կարող է հասցնել մեզ խաղաղութեան ազատ կերպով մտածած ցանկութիւններին:

Ս.
Ստաշին 1917 տարի
Կիրակի, 10 սեպտեմբերի
N 21

Հետազոտվում են Տոդի Սուրբ Հովհաննես եկեղեցու տարածքում հայտնաբերված գտածոները

Արցախի Հանրապետության «Պատմական միջավայրի պահպանության պետական ծառայություն» ՊՈԱԿ-ի գործառնություններից մեկը պահպանվող հնավայրերի տարածքներում պեղումներ իրականացնելն է: 2005-ից հնագիտական մեծածավալ պեղումներ են իրականացվում Տիգրանակերտում, ավելի վաղ սկսվել են Հաղորդի շրջանի Ազոխի քարանձավի պեղումները: Վերջին տարիներին հնագիտական պեղումներ են իրականացվել նաեւ Կարկառում, Մարտակերտի շրջանի Նոր Հայկաջուր համայնքի, Ամարասի վանքի տարածքներում, «Տոդի մելիքական ապարանք» պատմամշակութային արգելոցի տարածքում եւ այլն:

Արգելոցի տարածքում իրականացված պեղումների արշավախմբի ղեկավար՝ «Պատմական միջավայրի պահպանության պետական ծառայություն» ՊՈԱԿ-ի գիտական գծով փոխտնօրէն, պատմական գիտությունների թեկնածու Նժդեհ Երանյանն ասել է, որ պեղումների նպատակը եղել է մելիքական տապանատան հայտնաբերումը, վերականգնումը եւ ընդհանուր ուսումնասիրությունը:

«Նպատակ ունեինք հայտնաբերել Մելիք Եգանի եւ մի քանի այլ մելիքների, մասնավորապէս Մելիք Արամի, Մելիք Եսայու, ովքեր Մելիքի որդիներն են, եւ Մելիք Եգանի հոր՝ Ղուկաս Վարդապետի թաղումների հստակ վայրը: Տա-

պանաքարերը տեղաշարժված են եղել, եւ մենք պեղումներն իրականացրել ենք, որ գտնենք թաղվածների ճիշտ վայրը: Արդյունքում՝ մենք Սուրբ Հովհաննես եկեղեցու հարավ-արեւմտյան հատվածում վավերագրել ենք քառակուսի հատակագծով տնտեսական



նշանակության մի սենյակ, որի մէջ հայտնաբերել ենք 18-րդ դարում Արցախում գործածված 170 արծաթե մետաղադրամ, որոնք ուսումնասիրվել են դրամագետ Արամ Վարդանյանի կողմից», - ասել է Ն.Երանյանը՝ նշելով, որ ուսումնասիրություններից պարզվել է, որ գտածոների մի մասը ձուլվել են Գանձակում եւ Պարսկաստանում. կան նաեւ

3 այլ դրամներ եւս, որոնք չեն գործածվել այս տարածքում, բայց հայտնվել են դրամների մէջ:

Եկեղեցու հարավ-արեւելյան հատվածում ուղղանկյուն երկայնական հատակագծով մի կառույց է հայտնաբերվել, որտեղ շուրջ 1 տասնյակ թաղում-

լորն էլ թաղված են քրիստոնեական կարգով: Այլ մանրամասներ ճշտելու համար հարկավոր է շարունակել հետազոտությունները: Մենք ներկայումս պատրաստվում ենք դրանք ուղարկել կարբոնային անալիզի, որպէսզի հստակեցվի նաեւ թաղումների ժամանակաշրջանը», - մանրամասնել է Ն.Երանյանը:

Պեղումների ընթացքում եկեղեցու հարավային բակում հայտնաբերվել է նաեւ շուրջ 50 տապանաքար, որոնցից մի քանիսն էլ մելիքական ընտանիքի այլ անդամներին է: Եվ չնայած եկեղեցու տարածքում պեղումների աշխատանքները հիմնականում ավարտված են, բայց հետազոտությունները դեռ պետք է շարունակվեն:

«Ցանկացած հուշարձանի պեղումներ նախելառաջ ամրապնդում է հուշարձան-համայնք կապը, ինչը ներկայումս հուշարձանի պահպանման կարելորագոյն մեխանիզմներից մեկն է: Ինչ վերաբերում է Տոդի Սր. Հովհաննես եկեղեցու պեղումներին, ապա նշեմ, որ չնայած առկա են որոշակի պատմական գրավոր տեղեկություններ, այնուամենայնիվ պեղումները նոր տեղեկություններ եւ մանրամասներ են հաղորդում 18-20-րդ դարերի հայ ժողովրդի պատմության եւ մշակութային որոշ դրվագների վերաբերյալ», - նշել է Նժդեհ Երանյանը:

Լուսինե ԹԵՎՈՅՅԱՆ